



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1870 ՉՄԻՆ

ՆԻՍ ԻՆԵՏԱՍԵՐՈՐԴ

26 ֆետրուար 1871



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԻԻԷԻՆՏԻՍԵԱՆ

— 1871 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

Ն Ի Ս Տ Ժ Թ .

26 ՓԵՏՐՎԱՐ 1871.

ՆԱԽԱԳԱՀ . — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԲ

ԱՏԵՆԱՊԵՏ . — ՕՏԵԱՆ Գ. ԷՖ .

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

- 1^o Վաւերացումն ատենագրութեանց ժՒ ժԵ. ժԶ. ժԷ. նիստերուն :
- 2^o Վաւերացումն ընտրութեանց նորընտիր երեսփոխանաց :
- 3^o Ատենական կանոնագրութիւն :
- 4^o Վերաքննութիւն Սահմանագրութեան :

Ժամը 6 1/2ին ատենը կը բացվի 45 երեսփոխանաց ներկայութեան , որոց թիւը յետոյ 65ի հասաւ . Գ. Ատենապետ Կ. Կարակէօզեան էֆ. ժողովին զիտողութիւնը կը հարցնէ ժՒ. նիստի ատենագրութեան վրայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — ժՒ. նիստի ատենագրութեան 194 երեսի երկրորդ սիւնակին մէջ յիշուած չ'է սա խօսքս թէ՛ « մենք եկեղեցական վարդապետութիւններէ , քրիստոնէականէն եւ սուրբ զիրքէն ասանկ սովորած ենք » . նոյնպէս 195 երեսին մէջ ալ , մեր գործերուն վրայ պիտի աւելնան « ազգային Ընդհանուր ժողովոյ » բառերը :

Դարձեալ՝ 209 երեսի Ա. սիւնին մէջ « նորանոր բառեր եւ անսովոր յանգեր ու մասնիկներ կ'երեւին » պիտի ըլլայ . նաեւ նոյն կարգին մէջ թիւրիմացութեան տեղի կու տան խօսքին վերջը պիտի ըլլայ « լեզուին ընդհանուր սովորութեան եւ օրինաց հակառակ » խօսքն ալ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — ժՒ. նիստի ատենագր-

րութեան 201 երեսին մէջ Ատենապետ էֆ. ին զիտողութենէն ետքը իմ խօսքս թերի եւ չըփոթ կերպիւ նշանակված է , սապէս՝ « եղեւութիւնը խոստովանելով Փափազեան էֆ. դանազան պարագաներ մէջ կը բերէ եւ վերջապէս խօսք առնելով կ'ընթեռնու հետեւեալը » — որ պիտի ըլլայ սապէս՝ « ամեն անգամ զիււանագպիրք կը խմբագրէին ատենագրութիւնը , ուստի եթէ անոնք խմբագրէին եօթներորդ նիստի ատենագրութիւնը , հարկաւ այդ պակասը լրացնել պիտի հոգային , զի նոյն օրն իրենց սխալիլը խոստովանեցան թէ չ'են նշանակեր ատենագրութեան մէջ իմ ըրած խօսքս , կարծելով թէ զրաւոր կը խօսիմ . բայց յետոյ իմացայ թէ խմբագրութիւնն Ատենագպիր էֆ. ֆէնտին ըրեր եւ տպարան յանձներ է : Ազգ ըրի իրեն եւ ինք արդարեւ ազաչեց զիս որ երթամ տպարան յանձնեմ . բայց տպագրութիւնն յառաջ անցած ըլլալով , ստիպվեցայ ժողովին բերել այժմ : Հետեւաբար պակասութիւն կամ պատասխանատուութիւն մը եթէ կայ , ինծի չը վերաբերիր . եթէ ժողովը չը հա-

րելի ընել ուղեղն էր : Ազգը հասուն փորձերով անոր դժուարութիւնները ո՛ր կէտերու մէջ ըլլալը գեռ չը տեսած , պապական դրութեան պաշտպանութեան մը համար (1866ին յարուցված իրաւասութեան խնդրոյն համար կ'ըսեմ) Սահմանադրութիւնը տարաժամ վերաքննութեան ենթարկեցաւ Ազգին կամացն հակառակ : Ազգը ներկայ Սահմանադրութեան հաղիւ ընանշանայ սկսած եւ անոր շատ մը դժուարութիւններն անհետացած միջոցին , բողոքովին նոր եւ կերպարանափոխեալ սահմանադրութիւն մը կ'ուզվի տալ իրեն , որոյ մէջ դժբաղդարար կը տեսնվի դարձեալ պապական սկզբունք , որք պատճառ եղան պահ մը տապալել ազգային Սահմանադրութիւնը :

Հոս կարեւոր խնդիր մը կը ծնի , զոր պատկառելի երեսփոխանութեան բարձր ուշադրութեանը կը յանձնեմ . այն է՝ թէ վերաքննութեան խնդիրը այսօրուան վիճակին մէջ օրինաւոր շրջանի մէջ է , թէ՛ սպօրինաւոր . ես կը կարծեմ թէ օրինաւորութեան շրջանէն դուրս կը գտվի : Արդարեւ սահմանադրութիւն մ'ունէինք զոր կը գործադրէինք . անոր վերաքննութեան պայմանաժամն ու եզանակը որոշված էր . բայց դժբաղդարար արտաքոյ կարգի պատճառներ , զորս չ'եմ ուղեր յիշել , զայն տարաժամ վերաքննութեան ենթարկեցին , եւ անուղղակի ու սպօրինաւոր միջոցներով յանձնախմբոց ձեռք վերաքննութիւնը կատարվելէ ետքը , այսօր խնդիրն երեսփոխանական ժողովոյն ատենան ելած է :

Մեր ընելիքը խիստ պարզ է . եթէ խնդիրը իր օրինաւոր շրջանէն ելած է , զայն իր շրջանին մէջ մտցնել մեր առաջին գործն է : Ներկայ Սահմանադրութիւնն այժմ գործադրութեան մէջ է , անոր վերաքննութեան եզանակը՝ որ օրէնքի կարգ է եւ անփոփոխելի , աչքերնուս առջեւ բերելով , կը տեսնենք թէ վերաքննութեան գործողութիւնն ըստ օրինի չ'է կատարված . որով մինչեւ հիմա եղածները սպօրինաւոր համարիլ մեր առաջին պարտքն է , ու Սահմանադրութեան օրինաց համեմատ այսօրվրէ՛ օրինաւոր վերաքննութեան գործին սկզբնաւորութիւն ընել հարկ է :

Թող չը կարծվի թէ ասով գործերնիս կ'երկարի . ընդհակառակն ասով ամենէն կտրուկ ձամբուն մէջ մտած կ'ըլլանք :

Խնդիր մը երբ իր պարզութենէն ելած է , պէտք է նախ զայն իր պարզութեանը վերածել եւ յետ այնորիկ զայն լուծել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Պէկեան էֆ.ի ես ալ համամիտ եմ , որովհետեւ յայտնի է որ պետական հարուածի մը պատճառաւ Ազգն իր իրաւունքէն զրկվեցաւ . պէտք է որ վերաքննութիւն տրամադրելու իրաւունքն Ազգին վերադառնայ , եւ եթէ ժողովը Պէկեան էֆ.ի առաջարկութիւնն ընդունի , իր ճակտին վրայ գործնեալ անտարբերութեան սեւ արատը սրբաճ ու ջնջած կ'ըլլայ :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՅ. — Ինչպէս որ արդէն խօսվեցաւ , Սահմանադրութեան վերաքննութիւնն ընելու համար պէտք է միայն անոր պակասութիւն ունեցող տրամադրութիւնները նրկատողութեան առնուել , եւ ոչ թէ ամեն ատեն նոր ի նորոյ սահմանադրութիւն խմբադրելու եղենք . այս ընթացքով ընաւ երբէք մեզի մընայուն օրէնք մը չ'ենք կրնար ունենալ Անդղիացւոց պէս , այլ Գաղղիացւոց նման շատ անգամ կը պարտաւորինք թղթի վրայ միայն օրէնքներ խմբադրելով ժամավաճառ ըլլալ :

Ուստի ամփոփելով խօսքս , կ'առաջարկեմ որ փոխանակ Սահմանադրութիւնն ամբողջապէս վերաքննութեան ենթարկելու , միայն անոր պակասաւոր երեւցած կէտերը՝ զորս փորձառութիւնը մեզ կ'ուսցնէ , լաւ նկատողութեան առնելով յաւելունք , պակասեցնենք եւ կամ վերցնենք : Նաեւ թէ՛ հիմա գործադրութեան տակ եղած Սահմանադրութենէն եւ թէ՛ Վերաքննիչ Յանձնախմբին պատրաստած ծրագրէն կրնանք սկսիլ զիտողութիւններ ընելով յաւելի եւ կամ պակասելի կէտերը Բ. Գրան հաւանութեանը ներկայացնել . ուստի այս գործողութիւնը յանձնենք մասնախմբի մը , որ իր ընելիք գիտողութիւնները ժողովոյն ներկայացնէ :

ՊԵՆԵԱՆ Ք. ԷՅ. — Սահմանադրութեան ո՛ր տրամադրութիւններէն պէտք է սկսիլ եւ ի՞նչպէս քննութեան ձեռնարկելն երկրորդական խնդիրներ են . առաջին խնդիրն , ինչպէս ըսի՝ նախ որոշելու է թէ վերաքննութիւնն օրինաց տրամադրութեան համեմատ եղած է , թէ՛ ո՛չ , եւ ետքը որոշելու է թէ արդեօք նախ Սահմանադրութեան սկզբանց ընդհանուր տրամադրութեանցը վրայ պէտք է ընել վերաքննութիւնը , թէ՛ Սահմանադրութիւնն յողուած առ յողուած վերաքննելով :

Մենք հիմա բողոքովին ծուռ ձամբուն մը մէջ կը գտվինք . բայց այսօր ժողովս լիազօր իշխանութիւն ունի այդ ծուռ ձամբուն եղելու , այս մասին ժողովը կ'ըզգուշացնեմ , եւ բարձրաձայն կը գոչեմ որ պէտք է ետ դառնայ :

այս խնդիրը , երեսփոխան էֆ. ներ , ձեր բարձր ուշադրութեանը կը յանձնեմ . եթէ իրաւանց համեմատ ազգային Սահմանադրութեան վերաքննութիւնն օրինաւոր ձամբուն մէջ մտած է , ընդհանուր ժողովը կրնայ շարունակել վերաքննութեան գործը :

ԱՅՎԱՍԵԱՆ ՄՍՏ. ԷՅ. — Թէ Պէկեան թէ Պառնասեան եւ թէ Ղազարոսեան էֆ.ներուն ըրած գիտողութիւններն անտեղի են : Ես չ'եմ պարմանար Պէկեան եւ Պառնասեան էֆ.ներուն խօսիցը վրայ , զի նոքա թէ՛ նոր ժողովի եկած են եւ թէ՛ այս խնդրոց պարագաներուն անտեղեակ . իսկ կը զարմանամ Ղազարոսեան Քրիստոսաւոր էֆ.ին վրայ , որ այսքան նիստերէ եւ այսքան եղած եւ ընդունված որոշումներէ ետքը՝ կ'ենէ Պէկեան էֆ.ի համամիտ կ'ըլլայ :

Պէկեան էֆ. կ'ըսէ թէ ծուռ ձամբուն մէջ կը գտնվի այսօր ընդհանուր ժողովը , ուստի կը յայտնեմ Պէկեան եւ Ղազարոսեան էֆ.ներուն որ աղէկ սերտեն ընդհանուր ժողովոյ մինչեւ ցարդ Սահմանադրութեան վերաքննութեան նկատմամբ ըրած որոշումները :

Սահմանադրութեան վերաքննութեան խնդիրն ըստ օրինի ներկայացաւ ընդհանուր ժողովոյ . ընդհանուր ժողովը Վերաքննիչ Յանձնախումբ մ'ընտրեց , եւ նա ինչպէս որ յարմար գտանց այնպէս ըրաւ վերաքննութիւնը եւ ժողովը ալ զանոնց գործողութեան արդիւնքը ձեռնարկութեամբ ընդունեց . իսկ գալով Պառնասեան էֆ.ի , կ'ըսեմ թէ նա լաւ խօսեցաւ , բայց իր բաժնեբը չ'են հակառակիւր ժողովոյն որոշմանը . նա կ'ըսէ վերաքննութեան խնդիրը Յանձնախմբի մը յանձնենք , որպէս զի գործադրութեան տակ եղած Սահմանադրութեան եւ Վերաքննիչ Յանձնախմբին պատրաստած ծրագրին մէջ գտնված խտրութիւնները ժողովին ներկայացնելով ժողովին ըստ այնմ հարկ դատված կէտերը միայն Բ. Գրան վաւերացմանը ներկայացնէ . այս խօսքերն ընդհանուր ժողովոյ ցարդ ըրած որոշմանց համընթաց ըլլալով կամ ժողովը կրնայ համաձայնիլ Պառնասեան էֆ.ի եւ կամ ինք ժողովոյն . ուստի ասոնք երրորդական չորրորդական բաներ են :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Պէկեան էֆ.ի խօսք տալէ առաջ մասնաւորապէս յիշեցուցի իրեն որ Սահմանադրութեան ընդհանուր տրամադրութեանց վրայ վիճաբանութիւն պիտի ըլլայ . խօսք տուաւ , բայց ինչպէս կը նշմարենք :

տարբեր խնդիր մը յարուցանել կ'ուզէ , եւ ընդունված ու յառաջ գացած որոշում մը բողոքովին ետ դաշնել . ուստի այս պատիճան ետ ձգելու ջանք մը պէտք է ընդունելի համարվի ժողովէն եւ չ'էր ըլլար իսկ ներելի եթէ առաջարկողը նորեկ չ'ըլլար . վասն զի Պէկեան էֆ. որ երկրորդ անգամն է որ ժողովոյն կը ներկայանայ , կամ գեռ եւս իմացած ըլլալու չ'է նախորդ անցքերուն մէջ եղած որոշումները եւ կամ օրինական ձեւերը վրիպած ըլլալուն իւր յիշողութենէն . ուստի կարծեմ ժողովը պատրաստ է մանաւանդ Պէկեան էֆ.ի յիշեցնելու թէ պէտք է վերաքննութիւնն յառաջանայ , վասն զի որոշված ու սկսված խնդիր մըն է , որ չը կրնար ետ դառնալ . հետեւապէս Պէկեան էֆ. կրնայ միայն վերաքննութեան վրայ շարունակել իւր վիճաբանութիւնը , որ խնդրոց կարգն անցած է , եւ այսօրուան տրվելու որոշումն ալ այն է թէ վերաքննութիւնը ընդհանուր տրամադրութենէն պէտք է սկսիլ , թէ յողուած առ յողուած :

ՊԵՆԵԱՆ Ք. ԷՅ. — Ատենապետ էֆ.նախ , գուք կ'ըսէք թէ ընդհանուր ժողովոյ մէջ այսօրուան ըլլալու որոշումը Սահմանադրութեան այս ինչ կէտին կը վերաբերի . միթէ ընդհանուր ժողովը անել ձամբուն մը մէջ տեսնելով կրնամ անտարբեր մնալ , եւ միթէ իր երեսփոխան մեծ իրաւունք չ'ունիմ այս մասին խօսելու եւ յայտնի երեւցած վտանգի մը վրայ իմ մեծապատիւ պաշտօնակցացս ուշադրութիւնն հրաւիրելու :

Ասկէ մէկ քանի նիստ առաջ՝ վտանգ կայ ըսելով ոմանք եղած որոշում մը ետ ձգել տուին , եւ ես ալ որ այժմ վտանգ մը կը նընմարեմ , միթէ պարտքս չ'է՞ զգուշութեան հրաւեր կարդալ պակասելի ժողովոյն :

Տէրութիւնը մեզի Սահմանադրութիւն մը չընործած է , եւ մեր ձեռքն է անոր ուղիղ կամ անուղիղ , վտանգաւոր եւ կամ անվտանգ կէտերուն վրայ զիտողութիւն ընել :

Նորէն կ'ըսեմ իմ խօսքս ամփոփելով թէ՛ մեր Սահմանադրութիւնը խաբխուլ հիման մը վերայ չը հաստատենք , որ մի գուցէ օր մը զայն վերստին վտանգի մէջ տեսնելու դժբաղդութիւնն ունենանք , կ'աղաչեմ , այս կէտին վրայ լաւ խորհիւք :

Իսկ Այվատեան էֆ.ի ըսածներուն գալով . . . ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Շատ լաւ կ'ըսէք , այս մասին ընդ երկար խորհելու է , եւ եթէ ուղէք պատրաստեն Վ. յվատեան էֆ.ի , աւելի պիտի երկարի , ուստի ներեցէք որ ձեզի ձեր մէկ սխալն

յիշեցնեմ. դուք կ'ըսէք թէ ասկէ առաջ՝ վասնզ կայքսերով եղած որոշում մը ետ ձգված է. բայց այդպէս չէ. վկայ ատենագրութիւնք. Ձեր ակնարկած խնդիրը դեռ այն ժամանակ չ'էր լուծված կամ որոշված, հետեւաբար արվելու որոշման մը վրայ ժողովն զգուշացնել պէտք էր վտանգի մը առջեւ:

Բայց վերաքննութեան խնդիրն այնպէս չէ, միւսը չը կրնար ասոր օրինակ բռնվիլ հոս. վերաքննիչ Յանձնախմբին ծրագիրն ընդունված եւ խնդիրն որոշված է. որոշված խնդիր մը ըստ օրինի չը կրնար վերստին ետ դառնալ, ասի մեզի համար վճռական է. վասն զի Ընդհանուր ժողովէն դուրս չը կայ բարձր հեղինակութիւն ունեցող ուրիշ ժողով մ'ալ, որ դանոր որոշումները վերաքննութեան ենթարկելով ետ ձգվելու վճիռ տայ:

Եթէ դուք այսօր եղած եւ ընդունված որոշման մը դէմ խօսելով ուղէք ետ ձգել, վաղը թերեւս ուրիշ մ'ալ ձեզի հետեւելով եւ վտանգ կայ ազազակելով ուղէ ետ թողուլ ձեր այսօրվան որոշումը. այն ատեն Ընդհանուր ժողովոյ բոլոր ըսած որոշումներն անգործադրութեան դատապարտելով ժողովն ըստ ինքեան վտանգի ենթարկեալ կ'ըլլայ. արդ՞ ո՞վ կայ հոս մեր մէջ այսպիսի նպատակի հետաժողով:

Իսկ գալով Պէկեան էֆ. ի այն խօսքին, որ ըսաւ թէ պապական ոգւով սողորեալ է. կը պատասխանեմ թէ վերաքննութեան միջոցին այդ մասին կրնայ դիտողութիւն ընելով, ցոյց տալ թէ պապական եւ կամ այլ տեսակ ոգի կայ. ես կ'առաջարկեմ որ Պէկեան էֆ. ի խնդրէն դուրս յարուցած տարբեր խնդրոյն առանց կարեւորութիւն տալու, ձեռք առնունք վերաքննութեան թելը, որ այս օրուան խնդիրն է, եւ զայն յառաջ վարենք. ուստի ուրիշ խօսք տալէ առաջ ժողովին կը հարցնեմ թէ Պէկեան էֆ. ի յարուցած խնդրոյն վրայ վիճաբանութիւնը շարունակի, թէ զայն մէկդի թողով անցնիք վերաքննութեան խնդրոյն:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Սահմանադրութեան վերաքննութիւնը նախապէս թաղական մատակարարութեան գլխէն պիտի սկսէր, յետոյ փոխվեցաւ եւ Ընդհանուր տրամադրութեանց վրայ սկսաւ վերաքննութիւնը:

Ես կ'ըսեմ որ մեզի ներկայացած ծրագիրը վճիռ ջուրի մը կը նմանէր ուրիշ փախաբանօք կ'ուզէինք մեր ծարաւն յաղեցնել. բայց այժմ

կը նկատենք որ վճիռ կարծած ջրերնուս ակը թունալից է եղեր. մեր պարտքն է չ'աճապարել, այլ քննել:

Ես բարձրագոյ կ'ըսեմ թէ այն ժամանակ ձեռք վեր վերցնելնուս համար կը ցաւինք որ խարվեր ենք. ուստի հիմա ձեռվրնիս վար կ'առնենք ի պաշտպանութիւն Ազգին իրաւանց, զորս պաշտպանելու համար միայն այս պաշտօնն ընդունած ենք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ատենապետ էֆ. ձեր տուած բացատրութեանց պիտի պատասխանեմ. ուստի կը խնդրեմ որ վայրկեան մը ձեր ուշադրութիւնն ինձի դարձնէք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Արովհետեւ նոր խնդիր մը յարուցված է, ուստի անոր նկատմամբ եւ ոչ մէկուն խօսք տալ կը սրբաւարիմ, այլ պարտք կը համարիմ քուէի դնել:

ՊԵՎԵԱՆ Թ. ԷՑ. — Եթէ այս խնդիրը պիտի լուծվի քուէով, ուրեմն խօսքն իմ է:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Ատենապետ էֆ. դուք կ'ըսէք թէ քուէի պիտի դնեմ, ես ալ այդ քուէին վրայ պիտի խօսիմ. դուք կը կարծէք թէ ինչ առաջ խօսող ատենաբանները եւ մասնաւորաբար Պէկեան էֆ. նոր խնդիր կը յարուցանէ. բայց այնպէս չէ. նախընթաց նիստի մը մէջ Ապրո էֆ. յարոյց այս խնդիրը ծրագիրը Սահմանադրութեան դադարեալ վիճակին մէջ պատրաստված ըլլալը յայտնելով, Ասի նոյն իսկ 1866 մարտ 20 ի պետական հարուածի խնդիրն է. զոր երեսփոխանութիւնը իր այս անգամի առաջին նիստին մէջ յուզեց. եւ իբրեւ « դիտողութիւնք երեսփոխանաց Գործադիր Յանձնաժողովոյ անդեկազրին թերութիւնը լրացնելու » անունով խնդրոց կարգն անցուց: Աւրիշ նիստի մը մէջ դարձեալ այս խնդիրը յարուցեցաւ, երբ Աղարէկեան էֆ. ատենապետութեան աթոռին վրայ ծանոց թէ ինք ժողովոյ մէկ որոշմանը դէմ նամակներ ըստացեր է հրատարեալ երեսփոխաններէ, եւ այդ նամակաց մէկուն մէջ սպառնալիք երեւան գալով, ժողովը վեր ի վայր յուզեցաւ, եւ քիչ էր մնացեր որ դառնար պետական հարուածին պատճառները քննելու: Այսօր երեսփոխաններէն ոմանք ընդհանուր տրամադրութեանց խնդրէն առիթ առնելով վերաքննութեան ծաղու մը կ'ուզեն քննադատել: Իսկ եղած եւ ընդունված որոշում մը ետ դարձնելու հետեւանքին վրայ յայտնած երկիւղնիդ ինքնին կը ցրի, երբ յիշէք թէ վերաքննու-

թիւնը թաղական գլխէն սկսելու որոշման մէջ այնչափ աճապարանք ցուցված է, որ նոյն իսկ այդ առաջարկութիւնը Զ. նիստին մէջ քուէի դնող Ատենապետ էֆ. անմիջապէս եւ առ ժամայն յետս կոչած եւ բողոքած է նոյն ժամուս որոշեալ խնդրոյն մէկ էական առաջարկութեանը դէմ, եւ ժողովն ալ անմիջապէս Ատենապետ էֆ. ին տուած բացատրութեանը վրայ իր որոշման այն մասին գործադրութիւնը եւ անոր վրայ արվելիք որոշումը ետքի ձգեց: Եստ չ'անցաւ թաղական մատակարարութեան գլխէն ըլլալիք որոշումն ալ ետ ձգվեցաւ, եւ ընդհանուր տրամադրութեանց վրայ վիճաբանիլ որոշվեցաւ: Այս փոփոխութիւններն այսօր մեզ բերին հասուցին վերաքննութեան դուռը կամ աղբիւրը: Ինչպէս յայտնի է այս փոփոխութիւնները աճապարանօք արված որոշման մը հետեւանքներն եղած են, եւ արդարեւ Երեսփոխանական ժողովոյ մէջ խնդիր մը առանց վիճաբանութեան չը կրնար քուէի գրվիլ. վասն զի օրէնք չէ, իրաւունք չէ: Արթնալու է ուրեմն եւ աղէկ վիճաբանութեանէ հաքը քուէի դնելու է խնդիր մը:

Այս զեղծումներն ատենական կանոնաց չ'ըլլալէն յառաջ եկած են. եթէ ժողովը ատենական կանոն մ'առնենար, ըստ այնմ վարվելով, հիմայ այս չփոթութիւնները տեղի չ'էին տեսնար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Կը յիշեցնեմ Փափազեան էֆ. ին որ խնդրէն խիստ կը շեղի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — (Շարունակելով) Ես խօսքս ամփոփելով կ'ըսեմ, չ'աճապարենք այս խնդիրը փութով քուէի դնել. վիճաբանինք անք վրայ, եւ յետոյ ժողովն ազատ է ըսելու թէ եղածն արդէն եղած է, ես չը դառնանք. ուրիշ բան է այս. սակայն հերիք է որ մենք ձանձնեմք այս խնդրոյն էութիւնն ու պէտքը:

Այս պահուս Ստեան էֆ. կ'անցնի ատենապետի աթոռը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Վիճաբանութիւնը բացված էր երբ ժողովին եկայ. այլ կարծեմ չ'եմ պիտիլր եթէ ըսեմ թէ ինչ որ երեսփոխանաց անք կ'ուզեն սա է որ, վերաքննութիւնը փոխանակ սահմանադրութեան նոր ծրագրին վրայ ընելու, ազգովին ընդունված եւ արդէն գործադրութեան տակ եղած Սահմանադրութեան վրայ ըլլայ, եւ ասոր ալ սա պատճառը

կու. սան թէ այդ ծրագրին իր ծնունդն առած է այն եղելութեանէն որ ասկէ մէկ քանի տարի յառաջ կատարվեցաւ եւ որով Սահմանադրութեան գործադրութիւնը գաղբելով բարձրագոյն հրամանաւ պայմանեալ ժամանակէն առաջ վերաքննութեան ենթարկեցաւ: Այդ եղելութիւնը որ չարաբաստիկ կը համարվի առ ոչինչ գրքել կ'ուզվի, եւ իբրեւ չ'եղած Սահմանադրութեան վերաքննութիւնն այսօրվոնէ սկսիլ:

Ասի պարզապէս բողոք մըն է անցեալ եղելութեան դէմ եւ իբր այն հրապարիչ կողմ մ'ունիլ Միայն թէ այդ բողոքին ժամանակն անցած է հիմա եւ արդիւնք յառաջ չը բերէր: Այդ բողոքը ընօրները ինչու ժամանակին չ'ըրին, երբ արդիւնք մը կրնար ունենալ:

Եղածը եղած է. եւ շատ անգամ տեսված է որ գէշ բանէ մը աղէկ բան մը յառաջ գայ: Ես այն կարծիքն ունիմ թէ այսպէս է սոյն Սահմանադրութեան ծրագիրը: Գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան հեղինակներէն մէկը գտնված եմ եւ ես, իսկ սոյն ծրագրին մասնակցութիւն չ'եմ ունեցած: Եթէ հեղինակի անձնատիրութեամբ խօսելի, ես ալ պէտք էր որ սոյն ծրագրին ի բաց մերժողներէն ըլլայի. բայց անկողմնատիրութեամբ կը խօսիմ ու կ'ըսեմ որ, այս ծրագիրը արդի Սահմանադրութեան նախամեծար է թէ ըստ դատարարութեանը, թէ ըստ ամբողջութեանը, թէ ըստ ռճին: Մէկդի ուրեմն անօգուտ վիճաբանութիւնք. չիտակ նպատակին դիմենք. եւ որովհետեւ մէկ կողմէն արդի Սահմանադրութիւնը դարձեալ բարձրագոյն հրամանագործադրութեան մէջ է, եւ միւս կողմէն ըստ ինքեան ընտիր նոր ծրագիր մը կայ ներկայացեալ ըստ որոշման սոյն Ընդհանուր ժողովին, սկսինք վերաքննութիւնը այդ ծրագրին վրայ:

ԱՐԵԱԿ Յ. ԷՑ. — Խնդրոց կարգին դառնալու կը հրաւիրեմ, խնդրէն կը շեղինք. եւ կը բողոքեմ Դիւանին դէմ որ խնդրէն դուրս խօսք կուտայ: Ուստի պէտք չ'է Պէկեան էֆ. ի խնդրոյն հետեւիլ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Դիւանին դէմ կը բողոքեմ ինչ ըսել է, խօսք տուողը Դիւանը չ'է, այլ Ատենապետը. կ'աղաչեմ ասկէ հաքը կը բողոքել յարժար գատէք, ուղղակի Ատենապետին դէմ բողոքէք:

ԱՐԵԱԿ Յ. ԷՑ. — Այո Ատենապետ էֆ. ին դէմ կը բողոքեմ:

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՑ. — Իրաւունք ունի Արչակ էֆ. որ կ'ըսէ թէ խնդրոց կարգէն դուրս

է Պէկեան էֆ.ի խնդրոյն հետեւիլ. Պառնասեան եւ Պէկեան էֆ.ները նոր ի ժողով եկած ըլլալուն, չ'են գիտեր թէ վերաքննութեան մասին ինչ որոշումներ եղած են, եւ չ'են գիտեր թէ Ընդհանուր ժողովն արդէն իր քրէտովք քնարած է Աերաքննիչ Յանձնախումբը Սահմանադրութեան վերաքննութեան ծրագիր մը պատրաստելու համար, որն որ ըստ օրինի իւր պաշտօնը կատարելով ներկայ ծրագիրը մեղի ներկայացուցած է. հետեւապէս յիշեալ էֆ.ները անկանոնութեան մէջ կը գտնուին, երբ կ'ըսեն թէ այն ծրագիրը մէկզի ձգվելով ուրիշ յանձնախումբի մը ձեռք ուրիշ ծրագիր մը շինվի:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այլապեան եւ Արշակ էֆ.ներուն կողմանէ եղած ազդարարութիւններն իրաւացի են, վասն զի արդարեւ եղած վիճարանութիւնը խնդրէն դուրս է:

ՊԵՏԱՆ Թ. ԷՖ. — Դուք կըսէք թէ այսօր այս խնդիրն ես յարուցի, սակայն յառաջուց յարուցած էին. բայց որովհետեւ սոյն խնդրոյն նկատմամբ առաջին անգամ այսօր ես խօսեցայ, ուստի իրաւունք ունիմ բողոքել ձեր այն խօսքին դէմ որ կ'ըսէք թէ խնդրէն դուրս ուրիշ խնդիր մը կը յարուցնեմ. բայց այնպէս չ'է, եւ դուք կը սխալիք. վասն զի իմ յարուցած խնդիրս նոր բան մը չ'է, ոչ կաթողիկոսական ինչորի է, ոչ եկեղեցւոյ, ոչ Պատրիարքի եւ ոչ այլ ինչ, այլ արդէն վիճարանութեան զրկած խնդրոյն էութեանը եւ ոգւոյն վրայ կը խօսիմ:

Նախ սա կը հարցնեմ թէ սոյն վերաքննութիւնն օրինաւոր կերպով սկսված է, թէ ոչ. զայս կ'ուզեմ իմանալ:

Ստեան էֆ. ըսաւ թէ այս բողոքը ժամանակին պէտք էր ընել. իրաւ է որ ժամանակին չը բողոքելով պակասութիւն մ'եղեր է, բայց նոյն ժամանակին երեսփոխան գտնուող էֆ.ներուն ըրած պակասութիւնը միթէ մենք տուածելու պարտաւոր ենք, եւ միթէ այն ձրգտման որով այսօր դմեղ ծուռ ճամբու մը մէջ մտնուցած են, հետեւիլ պարտակա՞ն ենք:

Ստեան էֆ. կ'ըսէ թէ Աերաքննիչ Յանձնախումբին պատրաստած ծրագիրը շատ առաւելութիւններ ունի, այդ ուրիշ բան է. բայց ես կ'ըսեմ թէ անուղղակի կերպով մեզի եկած խնդիրը պէտք չ'է որ մենք ընդունինք:

Մենք այսօր ձեռնարկու Տէրութենէն վաւարացեալ եւ գործադրութիւնն հրամայեալ օրէնք մ'ունինք, ուստի մեր պարտքն է անոր տրամադրութեանը հետեւիլ, եւ ոչ թէ շարունակել մեր քայլերն անել ճամբու մը մէջ:

ուր ընկած կը գտնուիք այսօր դժբաղդարար: ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Չ'եմ գիտեր թէ այս խնդիրն ինչպէս յարութիւն առաւ այսօր, բայց կը նկատեմ որ խնդիրը անցեալին դէմ բողոք մըն է եւ ոչ այլ ինչ:

Պան մը առաջ ըսի թէ այդ բողոքին տակնն անցած, եւ հիմայ շատ ուշ է այդ խնդիրը յուզելու համար: Կը կարծեմ նաեւ թէ այժմ ոչ թէ միայն օգտակար չ'է, այլ թերեւս նաեւ վնասակար: Ժողովին անկ է որոշել թէ կ'ընդունի՞ այս վիճարանութիւնը խնդրէն դուրս, քրէտի կը գնեմ զայս:

ՊԵՏԱՆ Թ. ԷՖ. — Ես կը բողոքեմ նաեւ այս խնդիրը քրէտի դնել ուզեցնուող դէմ, վասն զի ճշմարտութիւն մը չը կրնար քրէտի դրվիլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Շատ լաւ բացատրեցիք Ատենապետ էֆ., եւ ըսիք թէ դէ՜ ճամբով լաւ բան մ'եկեր է. ընդունինք զայն. բայց լաւ կ'ընենք. մէկ կողմը կը տեսնենք որ ժամանակէն առաջ եւ Ազգին կամացն հակառակ Սահմանադրութիւնը վերաքննութեան դատապարտվելով Ազգին իրաւունքները վտանգի ենթարկվեր են. միւս կողմը կը տեսնենք որ ծրագիր մը կայ, զորոյ առաւելութիւնները կը գովէք: Այս երկուքը՝ դէ՜ն ու լաւքի կը շիռ դնելով, ո՞րը զո՞նք պէտք է:

Աերաքննութեան ատեն կրնանք այն ծրագիրն ալ նկատողութեան եւ գիտողութեան առնելով անկէ օգուտ քաղել մեզի. բայց գիտելու արժանի զլիսաւոր կէտը՝ Ազգին բռնաբարեալ իրաւունքներն են, եւ ինչպէս դուք ալ ըսիք պահ մ'առաջ թէ Սահմանադրութեան անժամանակ վերաքննութիւնը ունեց թելադրութեամբն եղած է. այս թելադրութեանց ու այս մասնաւորաց ազդեցութեան վրայ եթէ հարեւանցի կերպով մ'անցնինք անտարբեր մնանք, գուցէ օր մ'ալ այլոց թելադրութեամբն ու ազդեցութեամբը վերստին անժամանակ կերպով եւ Ազգին կամացն հակառակ դադարման ենթարկի Սահմանադրութիւնը. եւ մեր այժմեան անտարբերութեամբ անզի տուած եւ քաջալերած պիտի ըլլանք:

Եթէ դէպ ետեւ դառնալու ըլլանք, պիտի տեսնենք որ պետական հարուածին հեղինակները Ազգին եւ Երեսփոխանական ժողովոյ անունով գնացեր եւ Բ. Դուռը խարեր են. ինչպէս նոյն միջոցին Բ. Դրնէն ի Պատրիարքարան եկած հրամանագիրը կ'ապացուցանէ զայս ըսելով:

« Էջակէնէվ թէնգի՛ վէ թատիլնէ ու մուսէն

լուղու մ կէօրիւնմիւշ օլտուղու վէ մէ՛նխի ու մուսի միլլէթին տախի պու միւթալասատէ պուլունատուղու հուղարը ճէմիյէթ թարաֆընտան պիլ իթթիհատ իֆատէ վէ իթեան օլտուգտան սօղրա, պահս թէնգի՛ մատտէսինին նէ սուրէթլէ օլմասը մէսէլէսինէ ինթիքալ իտուպ, էկէրչի նիզամնամէտէ պունա տայիբ պազը մէվատ միւնտէրիճ իսէ տէ, պէր վէ՛նի մուհարրէր անըն իճրասը գապիլ օլամամասը հասէպի իլէ մվատտը մէրդուսէյէ թաթպիքէն հարաքէթ օլունմասը միւմբիւն օլմատըղը տախի քէմայէնպէղի սապիթ օլմուշ օլտուղունտան, չարէսիլ պիբ պաշգա եօլա կիտիլմէսինէ եանի թատիլաթ վէ թէնքիհաթը մուգթագիլէյի պիլ միւթալասալայի՛նէլէրինի թանզիմ վէ թագախիմ իթմէք իւղրէ տէվլէթ վէ միլլէթին միւթէմէտ վէ միւթէպէրի օլան ազատէն միւրէքքէպ պիբ գօմիսիճն թէրթիպ օլունմասընա մէ՛նպուրիյէթ կէօրիւմիւշ »:

Այս խօսքերը կը ցուցնեն թէ Բ. Դուռը ինչ որ ըրեր է, իբրեւ Ազգին կողմէն ներկայացեալ խնդիր ընդուներ եւ գործադրեր է, հետեւաբար ասոր պատասխանատու են յաւիտեան՝ Մարտ 20ին Բ. Դուռը ներկայացող անձինք:

Չարմանալին սա է որ նոյն հրամանագրին վերջը Ազգային Ընդհ. ժողովը հաստատ պահելու որոշումը կը յայտնէ, եւ թէ վերաքննութեան եւ թէ վարչութեան ժողովները, որ նոյն Ընդհ. ժողովէն պէտք էր ընտրվէին, նոյն օրը ներկայացող անձինք իրենք կ'ընտրեն եւ վաւերացնել տալով Պատրիարքարան կը խրկեն:

Ուստի ի խրատ եւ ի զգուշութիւն ապագային, կ'առաջարկեմ որ այս խնդիրը մանրակրկիտ քննութեան եւ դատաստանի ենթարկվելով այս աստիճան ի վնաս Ազգին եւ յանուն Ազգին յանդուգն գործողութեան մը ձեռնարկողները ճանաչվին: Իսկ քրէտի խնդրոյն գալով կը հարցնեմ թէ ինչ բան քրէտի պիտի դրվի. ես կ'առաջարկեմ որ խնդիրն այսպէս քրէտի դրվի « ժողովը կ'ուզէ՞ զէ՜ ճամբով եկած աղէկ գործ մ'ընդունիլ »:

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հիմա իմ քրէտի դնելիքս սա է. ժողովը կ'ուզէ՞ որ ներկայ վիճարանութիւնը շարունակի թէ կ'ուզէ որ խնդրոյն դառնալով Յանձնախումբին ծրագրին վրայ Սահմանադրութեան վերաքննութիւնն ըլլայ:

Քրէտի կը դրվի, բայց որոշ արդիւնք մը չը հասկըցվիր:

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Խնդրոյն լուսաւորված չ'ըլ-

լալը յայտնի կը տեսվի. նոյն իսկ քրէտին անկատար կերպիւ տրվելն, ուրեմն հարկ է որ բացված խնդրոյն վրայ վիճարանութիւնը գեռ եւս շարունակի, եւ իւրաքանչիւր ոք խնդրոյն էութեանն ու պարագաներուն լաւ վերահասու ըլլայ. ուստի պէտք չ'է որ մութ մնացած խնդիր մը շուտով քրէտի դրվի. հոս վիճարանութեան տեղ է:

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ատենապետ էֆ. լաւ բացատրեց, երբ ըսաւ թէ Ազգին իրաւանցը դէմ բռնաբարութիւն ըրած են ոմանք, եւ ես իր այս ըսածին համար շատ շնորհակալ եմ. բայց ետքն ըսաւ թէ պէտք է մոռնալ, եթէ միայն անձի մը համար եղած ըլլար այդ բռնաբարութիւնը եւ կամ ուղղակի իմ անձիս դէմ, կ'ընդունէի մոռնալու սկզբունքը. բայց որովհետեւ եղած բռնաբարութիւնը ուղղակի ազգի մը իրաւանցը դէմ է, կ'ըսեմ թէ՛ ներողամիտ ըլլալու տրամադրութիւն չ'ունիմ, եւ կարծեմ թէ եւ ոչ մէկ երեսփոխան տրամադիր է:

ԱՐԵԱԿ Յ. ԷՖ. — Նորէն կը բողոքեմ Ատենապետ էֆ.ին դէմ որ խնդրոց կարգէն դուրս խօսք կու տայ:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՖ. — Պէկեան էֆ.ի յարուցած խնդրոյն մէջ երկու սկզբունք կայ, օրինաւորութեան եւ պետական հարուածի: Ժողովուրդ մը օրինաց ընտելացնելու համար, հարկ է որ միշտ դրական օրէնք մը գտնուի եւ անոր տրամադրութեանց գործադրութեան լաւ հսկողութիւն ըլլայ առանց երբէք ազդեցութեան միտ դնելու, եւ որ եւ է միջամտութիւն ի բաց մերժելով. այն ատեն ա՛հ օրէնքն իր ազդեցութիւնը կ'ունենայ, ինչպէս որ Եւրոպական ազգաց, մասնաւանդ Անգլիոյ մէջ կը տեսվի, ուր օրէնքը կը գործադրեն եւ կը յարատեւեն. իսկ անոնք որ օրէնքը մէկ յայս եւ մէկ յայն կողմ կը շրջեն, անոր ազդեցութիւնը կը տկարանայ եւ երթալով կը նուազի. ուստի Պէկեան էֆ. մեծ իրաւունք ունէր այս խնդիրն յարուցնելու, վասն զի ասով թէ օրինաւորութիւնը կը յարգվի եւ թէ ազդեցութեանց ոյժը պակսելով ժողովուրդը միակերպ օրինաց ազդեցութեան կը վարժի:

Գալով Աերաքննիչ Յանձնախումբին պատրաստած ծրագրին, որ գեռ ընդունված չ'է, կրնայ այսօր ետ ձգվիլ, եւ վերաքննութիւնը գործադրութեան տակ գտնված Սահմանադրութեան վրայ կատարել. իսկ եթէ ընդունված է ծրագիրը եւ որոշված, ըսել է կատարված ի-

րողութիւն մըն է . ուրեմն հիմա ծողովը կրնայ վերաքննութեան պարագայիցը վրայ խորհելով, օրինաւորութեամբ որոշել վերաքննութեան խնդիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքին կարգը թէպէտ Պէկեան էֆ.ին է, բայց մէկու մը խօսք տալէ առաջ կ'ուզեմ Ատենապետին դէմ եղած բողոքոց պատասխանել, Խնդրոց կարգէն դուրս բացված արտաքոյ կարգի վիճարանութեան մը վրայ ժամեր եւ նիստեր սպառելը պակասութիւն մըն է, որոյ դէմ բողոքօք մեծ իրաւունք ունին : Այս պարագային մէջ Ատենապետը մէկ պարտք մ'ունի Ես ինքնին չ'եմ կրնար թողուլ որ ներկայ վիճարանութիւնը շարունակի եւ այդ պատասխանատուութիւնը չ'եմ կրնար ըստանձնել . բայց թէ ծողովը կ'ուզէ որ ներկայ վիճարանութիւնը յարատեւէ, այն ատեն կրնայ շարունակիլ : Նախ պէտք է ծողովն իր կամքը խմայնէ եւ առ այժմ միայն այս առաջարկութեան վրայ կրնայ խօսիլ :

ՊԵԿԵԱՆ Ք. ԷՖ. — Իրաւունք ունիք ըսելու թէ խնդրէն դուրս խնդիր չ'ըլլար . բայց մենք խնդրէն դուրս չ'ենք ելլեր, խնդրոյն հիմն է որ կը քննենք, եւ կը տեսնենք որ ծողովն իր նախորդ որոշումը սխալած է, եւ այսօր իր սխալման վերահասու ըլլալով կրնայ ետ անել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իմ ալ ծողովին հարցնել ուզածս այս է . ծողովը կ'ուզէ որ անմիջապէս Սահմանադրութեան վերաքննութեանը դադանքը, թէ իր առջի որոշմանը դէմ եղած դիտողութիւններէն ուշաբերելով կ'ուզէ որ այդ կէտին վրայ վիճարանութիւնը շարունակի :

Ընդհանուր ծողովոյ որոշումն էր Վերաքննելի Յանձնախմբին պատրաստած ծրագիրը կարգալ եւ քննել, եւ քննութիւնը նախ ընդհանուր արամադրութեանց վրայ եւ ապա յօդուած առ յօդուած կատարել . արդ Գիււանին պարագն է խնդրոց կարգին հետեւիլ եւ ոչ ուրիշ խնդիր ձնօք առնուլ . միայն թէ, ինչպէս ըսի, սա կրնամ ընել որ ծողովին կը հարցընեմ թէ կ'ընդունի՞ ձեր յարուցած խնդրոյն վրայ վիճարանութիւնը շարունակել . ծողովը թող զայս որոշէ նախ . սեւտի քըւէի կը զընեմ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ատենապետ էֆ. դուք կ'աճատարէք եւ անմիջապէս քըւէի դնելով գոցել կ'ուզէք վիճարանութիւնը . բայց ծողովին իրաւունքն է բացված վիճարանութեան

վրայ լուսաւորիլ եւ այնպէս իր քըւէն տալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ես անկողմնակալ կերպով քըւէի պիտի դնեմ խնդիրը, եւ ոչ ձեր եւ կամ միւսին ըսածը . իմ ծողովին ըսածս սա է . խնդրոց կարգէն դուրս միջանկեալ խնդիր մը ծագած է, կը հարցնեմ ծողովին թէ խնդրոց կարգին վրայ կ'ուզէ՞ շարունակել վիճարանութիւնը, թէ ձեր յարուցած խնդրոյն վրայ Խնդրոց կարգն ուղօղները ձեռնդնին վեր առնեն :

(Վ. քըւէն — Ե շըւէն)

ԱՊՐՕ Ս. ԷՖ. — Յայտնի կ'երեւի թէ խընդիրն ինչպէս որ պէտք է, դեռ այնպէս ըմբռնած չ'են, որ ծողովը քըւէ տալու կը լիարանի . ուստի պէտք է որ Գիււանը լուսաբանէ ըզխնդիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրն այն է որ երբ Ընդհանուր ծողովը որոշում մ'ըրած է, վիճարանութիւնը այն որոշման շրջանին մէջ կը դադնայ . ինչպէս տեսիք, բողոքներ եղան ինծի դէմ, եւ ես այն բողոքներն իրաւացի դուրս ներուս համար չ'եմ կրնար խնդրոց կարգէն դուրս մէկուս խօսք տալ :

Ատենապետը իւր պարտքը կատարելու համար կ'ուզէ հասկնալ թէ ծողովը իր առջի որոշումը փոխելով կ'ուզէ՞ Պէկեան էֆ. ի ունկընդրութիւն ընել թէ իր առջի որոշմանը վերայ մնալ : Ատենապետին պարտք է ծողովին որոշմանը հնազանդիլ եւ հնազանդեցնել զամենքը . ծողովին ասկէ առաջ ըրած որոշմանը դէմ գործելու համար դարձեալ ծողովէն կամք հարցնել է իմ պարտքս : Երբ խնդրոց կարգէն դուրս վիճարանութիւն կ'ըլլայ, չ'եմ կրնար պատասխանատուութիւնը վրաս առնուլ եւ շարունակել տալ . բայց երբ ծողովը կամք յայտնէ շարունակելու, ան ատեն ես ազատ կ'ըլլամ պատասխանատուութենէ, եւ զայն պատասխանատուութիւնը ծողովին ձգելով կը հարցընեմ թէ Պէկեան, Փախաղեան, Ղաղարոսեան, Պառնասեան եւ Ապրօ էֆէնտիներուն յարուցած այս նոր խնդրոյն վրայ վիճարանութիւն կ'ընդունի՞, մինչեւ որ ծողովն իր կամքը չը յայտնէ, չ'եմ կրնար թողուլ որ խօսիք :

ՏՕՔՔ. ԻԽԹԻՒՅԵԱՆ ԷՖ. — Ատենապետ էֆ. կ'առաջարկեմ որ ձեր ըսած կերպովը քըւէի դընէք խնդիրը :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ադ կերպով քըւէի կը զընեմ ահա՛ խնդիրը . ո՛վ որ կ'ուզէ որ ներկայ վիճարանութիւնը շարունակի, ձեռքը վեր վերցընէ :

Կ քըւէի դէմ ՉԱ քըւէով վիճարանութեան շարունակութիւնը կ'ընդունալի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ծողովը որոշեց, ուրեմն վիճարանութիւնը պիտի շարունակի : Խօսքը Պէկեան էֆ. ին է :

ՊԵԿԵԱՆ Ք. ԷՖ. — Իմ խնդիրս, որ վերաքննութեան վրայ է, երկուքի բաժնելով կ'ըսեմ, նախ՝ պէտք է որ անցած դէպքերուն վրայ աչք չը գոցենք . եւ երկրորդ՝ վերաքննութեան համար ալ կ'ըսեմ որ՝ ըստ իրաւանց կատարելու եւ ազգին բռնաբարեալ իրաւունքը . . .

Նախագահ Սրբազանը Ատենաբան էֆ. ի խօսքը ընդհատելով, կ'առաջարկէ պահ մը հանգիստ տալ ծողովին :

Հետեւապէս ատենը քառորդ մը դադրելէ ետքը՝ կրկին անգամ կը բացվի :

ՔԻԻՐՔՃԻՊԱՇԵԱՆ Ք. ԷՖ. — Ասկէ առաջ խօսք ուղած էի թէ ծրագիրն եւ թէ հին Սահմանադրութեան վրայ իմ կարծիքս յայտնելու համար :

Երագիրն անպատճառ յարգելու ընտելութիւն մը չը կայ ծողովին վրայ բանեցնօղ, բայց ծրագիրն ալ իր անպէտ ինչ մէկդի նետելն իրաւունք չ'է, զի այն խմբագրիչ մեծապատիւ էֆ.ները աշխատութիւն տուած են անոր համար եւ իրենց աշխատութիւնն ալ յայտնի կ'երեւայ, վասն զի խորհրդով եւ ուշիմ նկատողութեամբ գրված օրէնսդրութիւն մըն է . ուստի վերաքննութեան խնդրոյն մասին ծողովին տարբեր կարծիքները հաշտեցնելու համար կ'առաջարկեմ որ ծրագիրը եւ թէ Սահմանադրութիւնն աչաց առջեւ ունենալով կրնանք նոր մը խըմբագրել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — [Խնդիրը վերաքննութեան վրայ ըլլալով, վերաքննութիւնն ինչպէս սկսված է, զայն քննելու վիճարանութիւնը բացված է :

Բ. Գրեւն մարտ 20ին եկած հրամանագիրը, ինչպէս անոր մէկ կարեւոր մասը քիչ մ'առաջ կարդացի, մեզի կը յայտնէ թէ նոյն օրը Բ. Գուռը ներկայացօղ անձինք ըսեր են թէ Ընդհանուր ծողովն ալ վերաքննութիւնը կ'ուզէ . թո՛ղ բերվին Ընդհ. ծողովոյ արձանագրութիւնները որ քննվին թէ Ընդհ. ծողովը ե՞րբ որոշեր է ժամանակէ յառաջ վերաքննութիւն ընելու . նաեւ հրամանագիրը կ'ակնարկէ թէ՛

« Շիմտիքի թէրէքքիւպի նիզամնամէյէ մուվաֆրը օլմայան բուհանի վէ ճիսմանի մէճիսէյէ-

րին տախի հէման . Ֆէսիս վէ լաղլի իլէ, խիթամը թատիլաթէ զատար անլէրին եէրինէ գայիմ օլմագ իչիւն պիր մէճիսի միւխթէլիթի մուվաքքաթ թէչքիլ խիլմէսինէ տախի ճիւմլէ թարաֆրնտան լուղոււմ կէօսթիլիմլը օլմայ իլէ » :

Քննելի ուրեմն թէ արդարեւ Սահմանադրութեան հակառակ կերպով կազմված էին այն ժամանակի կրճակաւն եւ ֆաղաքակաւն ծողովները . եւ թէ՛ քանի որ նոյն հրամանագրին համեմատ Ընդհ. ծողովը մնաց, իրենք ինչպէս համարձակեցան Վերաքննիչ Յանձնախումբ եւ Վարչութեան ծողով ընտրել :

Կենսակաւն խնդիր մը կը նկատեմ ես այս բանը . եւ կ'առաջարկեմ որ յատուկ յանձնախմբի մը միջոցաւ եղելութիւնը քննվի բուն իր պատճառներովը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ինչպէս որ յառաջ ըսի, խմբիքնիս վճիտ ջուր ըլլալը սապէս ճըշգրտու պիտի իմանայինք, երբ գիտնայինք թէ Սահմանադրութեան դադարումն ինչպէս եղած է, Ազգի՞ն կամօքը . չէ թէ աղէտալի հրդեհներու եւ համաճարակ հիւանդութեանց միջոցին՝ Ազգին կամաց հակառակ Ազգին իրաւունքը բռնաբարվեր, եւ այն աղէտալի պարագաներուն մէջ Ազգը չէ կրցեր իր արդար բողոքի ձայնը բառնալ, որուն որ անկ էր :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎԳՐ. — Այնպիսի խնդիր մըն է այս, որ երբ տեղեկագրին վրայ վիճարանութիւն կ'ըլլար, երբեք երեւան ելած չ'էր . այսօր կը բացվի այս խնդիրը եւ այսօր ալ ամեն երեսիտիսան կ'ուզէ այս խնդրոյն խորը թափանցել . եւ մեծ պարտք մը կը կատարէ, եթէ բացված վիճարանութեան վրայ լուսաւորելով, իմանայ թէ խնդիրն այնպիսի աղբիւրէ ծնած է, որ ճնշում կ'ենթադրէ . ծրագիրը եկած ատեն բողոքօղներուն մէկն ալ մենք էինք եւ գիտնալ կ'ուզէինք թէ ինչպէս ծնունդ տուած է այն . բայց այժմ կ'իմանանք թէ ապօրինաւորութեան վիճած մըն է այդ ծրագիրը, պէտք է որ բողոքենք եւ օրինաւորութեան վերադադանք :

ԻՓԷՔՃԵԱՆ ԷՖ. — Ատենապետ էֆ. պահ մ'առաջ ըսաւ թէ ընդհանուր արամադրութեանց վերաքննութիւնը նախընթաց նիստին մէջ գործադրված է, մինչդեռ ծողովոյ միայն ներկայացաւ, բայց անկատար մնաց : Ոմանք թիչ մ'առաջ կը բողոքէին ըսելով թէ Գիււանը խընդրոց կարգէն կը շեղի . ես այս ըսելով չ'եմ ուզեր Գիււանը պաշտպանել, զի նա առաջն մեր

պաշտպանութեանը պէտք ունենալու, կրնայ ինքզինք պաշտպանել, եւ ես հիմա բողոքօրաց դէմ կը բողոքեմ, զի Կիւսանը խնդրոց կարգէն չէ շեղած. ոմանք կ'ըսեն թէ հին անցքերը քննենք, ես ալ կ'ըսեմ թէ անոնք մոռացու- թեան տանք, որովհետեւ Բ. Գուռն Սահմա- նադրութեան վերաքննութիւնը մեզի թողած է. ուստի հիմա կը պարտիմ յիշեցնել թէ Ընդ- հանուր ժողովը պէտք է որ գործադրութեան շրջանի մէջ եղած Սահմանադրութիւնը քննէ, թէ վերաքննութեան հարկաւորութիւնը որոշէ:

Պետական հարուածին պատճառները քննել եւ անկէ յառաջ եկած չը գործադրված սահ- մանադրութիւնը վերաքննելու վրայ խօսիլն ա- լելորդ է. ուստի առանց Յանձնախումբին եւն. մե- ղադրանք ընելու, պէտք է Սահմանադրութիւ- նը վերաքննել, եթէ վերաքննութեան կէտեր կան. եւ Բ. Գուռնն եկած հրամանագիր մը՝ որ գործադրված Սահմանադրութիւնը արգելքի տակ դնել կ'ուզէր, եւ ուրիշ հրաման մ'ալ որ զայն գործադրութեան կը տրամադրէ, որով պետա- կան հարուածը ինքնին մէջտեղէն վերցված ըլ- լալով, գործը այժմ մեր ընելիք որոշմանը կը մնայ, այն թէ՛ որի՛ն պէտք է հետեւինք. ա- սոր համար ես կ'առաջարկեմ որ եթէ վերա- քննութիւնն անհրաժեշտ է, գործադրութեան տակ եղած Սահմանադրութեան վրայ ընենք, որմէ քիչ շատ փորձառութիւն ստացած ենք:

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՅ. Զգենք պետական հար- ուածին խնդիրը, Ազգին վերքերը չը վերանո- րոգելու համար. խնդիրը վերաքննութեան վը- րայ է, եւ որոյ համար ալ պարզ եւ զիւրին ճամբայ մը կայ. մէկը կամ միւսը կ'ըսէ թէ այդ անել է, երբ ինքը չը գիտեր, զի այն ճամբէն գացած չ'է երբէք:

Ներկային մէջ Սահմանադրութիւն մ'ունինք որոյ վրայ բաւական փորձառութիւն ստացած ենք արդէն. ուստի փոխանակ անոր գործադ- րութեան արգելքները վերցնելու, ելնել նոր ծրագիր չի նկը, գործը դժուարացնել է:

Կ'ըսեն թէ արդէն պատրաստ է ծրագիրը, ասի հոգ ընելու բան մը չ'է, վասն զի տակաւին դեռ քիչերը տեղեկութիւն ունին անոր վրայ թէ արդեօք նախամեծա՞ր է այս, թէ ոչ, եւ որոյ համար շատ մը նիստեր պիտի զոհենք եւ նոր Սահմանադրութիւն մը պիտի խմբագրե- լու ելնենք, Բ. Գրան պիտի ներկայացվի, եւ նա ալ անոր վրայ բաւական ժամանակ խոր- հելէ ետքը պիտի վաւերացնէ:

Այս ճամբան պիտի չփոթէ զմեզ, պարզ

ճամբան սա է, այսօր գործադրութեան տակ եղած Սահմանադրութիւն մ'ունինք, քննենք զայն եւ անոր որ յօդուածոցը մէջ արգելք եւ դժուարութիւններ որ կան, վերցնենք. փո- խենք եւ այնպէս գործադրենք:

Մէկ ուրիշ կէտ մ'ալ սա է թէ նոր ծրագի- րը լեզուի նոր ձեւեր ալ հետը խառներ եւ բաւական դժուարիմաց ըրեր է զայն, եւ ես կը զարմանամ թէ ինչպէս Վերաքննիչ Յանձնա- խումբը ուշադիր չ'է եղած այս մասին: Այս ալ նոր դժուարութիւն մըն է ըստ իս:

ՊԵՏԵՍՅԱՆ Թ. ԷՅ. — Իմ ըսելիքներուս մեծ մասն Նիփէքճեան էֆ. բացատրեց. իմ բուն ըսելիքս միայն սա էր որ օրինաւոր կերպով վե- րաքննութեան դրաղինք. սա ծրագիրը՝ ներ- կայացաւ մեզի այսօր, բայց իրաւունք ունինք զայն մերժելու, զի օրինաւոր կերպով եկած չ'է մեզի. մեր ընելիք վերաքննութիւնն օրինաւոր ըլլալու համար պէտք է նաեւ հիմնական ըլլայ, եւ հիմնական եղած ըլլալու համար վերաքննու- թիւնը պէտք է գործադրութեան տակ եղած Սահմանադրութեան վրայ ընել եւ ամեն ոք պէտք է հիմնական կէտին վրայ խօսի. ասկէ դուրս խօսվածներն հիմնական չ'են:

ԵՆՈՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — Այս խնդրոյն վրայ ժողովոյն բոլոր նիստերուն ներկայ եղող երես- փոխան էֆ. ներն աղէկ կրնան ըմբռնել թէ ա- ռաջին այնպէս չ'է, երկրորդն ու երրորդը չ'է որ խօսք կը բացվի, այլ մէկ քանի անգամ յուզված եւ գոցված է:

Իրաւ որ Նիփէքճեան եւ Պէկեան էֆ. ներն ինէ առաջ իմ ըսելիքներուս մեծ մասը խօսե- լով իմ կարծեացս համառօտութիւնն ըրին. բայց ներվի ինձ քիչ մը անցելոյն դառնալ ա- ռանց խնդրէն շեղելու:

Փափաղեան էֆ. լաւ պարզեց ըսելով թէ պէտք է պետական հարուածին պատճառը բըն- արալի եւ Բ. Գրան հրամանագրոյն մէջ կար- դաց այն կտորը՝ որ կ'ըսէ թէ, « ժամանակէն առաջ կ'ուզէ Ազգը այս անգամ վերաքննել իւր Սահմանադրութիւնն ի պատճառս անոր դժուարագործադրելի ըլլալուն »: Ասոր դէմ թէ եւ լրագիրք բողոքեցին, բայց Ընդհ. ժո- ղովը լուծութիւն պահեց. եթէ այս մասին պա- կասութիւն մը կայ, ուրեմն նոյն իսկ երես- փոխանութեան վրայ է, որ անտարբեր կե- ցաւ, եւ իւր անտարբերութեամբը տեղի տը- ւաւ ապագային համար իրաւացի կասկածներ միտքէ անցնելու, ինչպէս որ Փափաղեան էֆ. ըսաւ:

Ես ինքս կը զարմանամ ինչպէս եղեր է որ Ընդհ. ժողովը չ'է մտածեր թէ այս պարագայիս մէջ իւր լուծութիւն պահելը ոչ միայն պետական հարուածին հեղինակները պիտի արդարացնէր, այլ ինքն ալ անոնց մեղաւկից եղած պիտի հա- մարվէր, թէ եւ իւր կամացն հակառակ եղած ըլլայն յայտնի էր:

Նիփէքճեան էֆ. ինչպէս ըսաւ, եղած բռնա- բարութեան վրայ Բ. Գուռն ալ համոզված ըլլա- լով այժմ, ետ առաւ իւր հրամանը. Փափաղ- եան էֆ. ի դիտողութիւնը պէտք է կենայ հոս, եւ պէտք է գիտնայ թէ Ազգը հաւանութիւն չ'էր տուած, եւ դատապարտած է. ուստի հիմա այս Ընդհանուր ժողովը իրաւունք չ'ունի որ եւ իցէ քննութիւն մը ընելու, եւ եթէ ի- րաւունք ալ ունենար, երկար քննութեանց կարօտ պիտի ըլլար, ուրիշ ուրիշ օգուտ մը չը կայ, այլ միայն թէ ապագային մէջ այնպիսի հարուած մը չը կարենայ նորոգուիլ. ատ նը- պատակին ալ հասնելու միջոցն է արձանագ- րել այս եղածները. եթէ ոչ՝ ասկէ դուրս մեր ընելիքը պատճառ պիտի ըլլայ քանի մը նիս- տեր պարագն անցնելու, անօգուտ տեղը զա- նազան խօսակցութեանց տեղի տալու:

Պետական հարուածի պատմութիւնը գրելն Ընդհանուր ժողովոյ պաշտօնը չ'է, այլ պատ- մադրաց, բայց սա միայն խօսքով զրուցելու բան է որ Ընդհանուր ժողովը զարձեւալ ան- տարբեր չ'ըլլայ. վասն զի երբ Ընդհանուր ժո- ղովն անտարբեր է, պետական հարուածներն այս կամ այն կերպով կու գան, ինչպէս որ պատմութիւնն ալ կը ցուցնէ թէ զանազան ազգաց մէջ եղած են:

Քանի որ դատախարակութիւնը յառաջ երթայ, կրնան վերնալ աղագաց մէջէն պետական հար- ուածները, եւ ե'րբ գայ նորէն, շուտ կամ կա- նուխ կրնան դարմանվիլ. եզան հարուածօղներ, բայց զայն ետ դարձնողներ ալ եղան. եւ Ազ- գըն օրհնեց այն անձինքը, որ օրինաւորութիւ- նը բերին. ինչ է հիմա պարտքերնիս, բնա- կան էր որ Սահմանադրութեան վերաքննութեան պատրուակաւ եկած էր պետական հարուածը, դատապարտեցաւ այժմ այն իրողութիւնը, զի դադարման դատապարտեալ Սահմանադրութիւ- նըն այսօր գործադրութեան ներքեւ է:

Յանձնախումբի մը քննութեան յանձնել կ'ա- ռաջարկվի պետական հարուածին տրամադրու- թիւնները. իմ ոչ պարտքս է եւ ոչ իրաւունքս ըսել այն անձանց թէ դուք ինչու համար ը-

րիք. նշանաւոր խօսք մըն է որ կ'ըսեն թէ կառքը կոտորի նէ ճամբայ ցուցնող շատ կ'ըլլայ. հիմա բողոքանաց եւ դատաստանի ժամանակն անցած է:

Մենք հիմա պետական հարուածին դէմ խօ- սելով, ըստ արժանւոյն դատապարտեցինք, եւ ըստ իս ազգային իրաւունքը տեղն եկած է այն օրէն սկսեալ, յորում դատապարտեալ Սահմա- նադրութիւնը վերստին գործադրութեան սկսած է:

Պետական հարուածը եկած ժամանակ նոր Սահմանադրութիւն մը պիտի խմբագրվէր, եւ ահա երեսփոխանական ժողովին ծրագիր մը ներկայացած է այսօր նոյն ժողովէն ընտրեալ Յանձնախումբի մը ձեռօք, որ ինչպէս ըսվեցաւ, ծափահարութեամբ ընդունված է:

Յիշեցէք Տեա'րք իմ, թէ ինչ բանի համար էր մեր ըրած ծափահարութիւնը, ծրագրի՛ն վը- րայ էր, թէ տեղեկագրութեան. ես կը յիշեմ որ տեղեկագրին վրայ էր որոյ համար ես ալ ծա- փահարեցի:

(Այո՛ այո՛)
Կ'աղաչեմ ըզՊափաղեան էֆ. որ դո՛ւ ըլլայ տուած պատասխանէս. պետական հարուածին վրայ ոչ ոք գո՛հ եղած եւ ոչ ոք ընդունած է, եւ նոյն իսկ Բ. Գուռը համոզված եւ ետ ա- ռած է արդէն: Շատ երեսփոխան էֆ. ներ կրկնեցին եւ արձանագրութեան մէջ ալ ան- ցաւ. ուստի դառնանք հիմայ Սահմանադրու- թեան վերաքննութեան:

Այս մասին ինէ առաջ խօսողներէն Նիփէք- ճեան եւ Պառնասեան էֆ. ները միեւնոյն մը- տօք են. ես այդ առաջարկութեանց սկզբուն- քին դէմ չ'եմ, միեւնոյն ճամբան պիտի տանի մեզ անշուշտ երբ բնտանք թէ սրն է մեր քննելիք Սահմանադրութիւնը, գործադրու- թեան մէջ եղա՞ծը. չիտակը խօսելով ես ալ քա- նի անգամ ուզեցի գործադրութեան մէջ եղա- ծը նոր ծրագրին հետ բաղդատելով եղած տար- բերութեանց վերահասու ըլլալ. ասկայն ծրագ- րին խմբագրութեան լեզուն մենէ անձանօթ ոճ մը կը կրէ, որու ընտելացած չըլլալով նաեւ զիս ալ շատ շուարեցուցած է չիտակը, բայց լեզ- ւին ձեւը քննադատելու պէտք չը կայ, եւ ինչպէս ասկէ առաջ ըսվեցաւ, Ընդհանուր ժողովը լեզուարանական ճամբան չ'է, միայն եթէ այդ խմբագրութեան ձեւը պատճառ ե- ղած է ոմանք տարտամութեան մէջ ձգելու, պէտք է գիտնան որ միանգամ Սահմանադրու-

թեան վերաքննութիւնը կատարվելէ ետքը՝ խմբագրութեանը համար շատ մասնաժողով մը կրնայ գրվիլ, եւ ամենուն հասկանալի ոճով մը կը հրատարակվի Սահմանադրութիւնը :

Ըստ իս պէտք է ուրեմն յօդուած առ յօդուած կարդալ, բաղդատել եւ միով բանիւ Սահմանադրութիւնը վերաքննել :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Գ. ԷՑ. — Իփէքճեան եւ Եուսուֆեան էֆ. ներուն համամիտ ըլլալով կ'ըսեն թէ մենք հիմայ երկու բան ունինք ընելու . նախ ցաւ յայտնել անոնց համար՝ որ պետական հարուածին պատճառ եղան, եւ շնորհակալութիւն յայտնել այն անձանց համար, որ Ազգին իրաւունքներն Ազգին գառնալուն պատճառ եղան, Ի. Գոնէն կրկին հրամանագիր մը բերել տալով . այս երկուքն ընել մեր ամենուն ալ պարտքն է . այս ըսելէ ետքը կը փութամ վերաքննութեան համար ալ իմ կարծիքս յայտնել թէ պէտք է որ գործադրութեան տակ գտնուած Սահմանադրութեան վրայ կատարենք վերաքննութեան գործողութիւնը, վասն զի անիկայ էր առաջ մեր ձեռքը, զոր այսօր ալ ձեռք ձգած ենք վերստին .

ԻԻԹԻԻՃԵԱՆ Կ. ԷՑ. — Իմ խօսելիքս Պատնասեան էֆ. ի ըրած մէկ ակնարկութեան վրայ է . Վերաքննիչ Յանձնախումբին պատրաստած ծրագրին վրայ ըրած դիտողութեան մէկ մասն ալ լեզուին կը վերաբերէր, ըսել է լեզուին պատճառաւ ամբողջ Յանձնախումբը դատաստանի քաշեց . եւ ես ալ որ այն Յանձնախումբին անդամներէն մէկն ըլլալու օրատուն ունեցած եմ, այն դատապարտութենէն աղատելու համար կը փութամ պատասխանել .

Սովորութիւն է որ ատենագիրք մը կ'ունենան ժողովները, եւ մինակ անոր եւ կամ մէկ քանի անդամոց կը յանձնեն խմբագրութեան գործը . ասանկ ալ մեր Յանձնախումբը իր մէջէն երկու հոգւոյ յանձնեց, այն երկուքը շատ անգամ չը կրնալով մէկտեղ դալ եւ աշխատիլ, մէկը միայն գրած է, եւ այն ալ ընականաբար իրեն յատուկ եղած ոճովը :

Իմ լեզուս չ'է այն, ես ալ չ'եմ ընդունիր այն ոճը . մասնաւանդ որ խմբագրական պաշտօնի մէջ գտնվելու ամեն մարդ ալ կրնայ հասկնալ թէ այն ոճն ու լեզուն իմը չ'է . բայց ատիկա խմբագրութեան պարագայ մըն է . Ընդհանուր ժողովը կրնայ դարձեալ խմբագրել տալ, իր որոշուին ընելէ ետքը :

Ինչպէս քննադատեցին ոմանք, ստուգիւ պարզ պէտք է ըլլայ օրէնքի մը խմբագրու-

թեան լեզուն . Եուսուֆեան էֆ. որ մեր ամենուն ծանօթ եղող գրաշէաներէն մէկն է, նա եւս կ'ըսէր թէ ծրագրին լեզուն չ'եմ հասկընար :

Արդ երրոր Եուսուֆեան էֆ. ի պէս մէկը չը կրնայ հասկնալ, հասարակութիւնն ինչպէս կրնայ հասկնալ, երբ այն օրէնքը գէթ հասարակաց մեծ մասին հասկցած եւ ընդունած լեզուովը գրված չ'ըլլայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Հոգ մը եւ ճիշդ մը կը նրկատեմ ամէն կողմէ, որ պետական հարուածին քննութեան խնդիրը մէկգի թողվի . մասնաւորաբար Եուսուֆեան էֆ. ջանաց զիս համոզել թէ Սահմանադրութիւնը վերստին գործողութիւն պետական հրամանը ինքնին ջնջած է անոր դադարմանը համար եղած պետական հարուածը . ուստի այսչափ դատապարտութիւն մը բաւական համարվի : Աւրիշ կողմէ ալ ներողութեան եւ անյիշաչարութեան մրմունջներ կը լսեմ : Բա՛ւ է ալ այսչափ անտարբերութիւն . բա՛ւ է այս աստիճան ներողամտութեան եւ անյիշաչարութեան ողին ի մեզ, որով առաւել վնասեցանք, քան թէ պակսեցան մեր մէջէն Ազգին դէմ մասնաւորաց դաւադրութիւններ : Եթէ իմ անձիս դէմ գործը ված պակսութիւն մը կայ կամ յանցանք, պատրաստ եմ ներելու . բայց ո՞վ կարող է ներել Ազգին դէմ գործվածներուն . ո՞վ կարող է ներել այն հարուածը, որ յանուն Ազգին գործվեցաւ եւ Սահմանադրութեան հինգ տարվան դադարմամբ Ազգին մեծամեծ վնասներու եւ կորուստներու տեղի արվեցաւ . եւ ներողութեամբ կամ անյիշաչարութեամբ ո՞չ ապաքէն այսպիսի հարուածները որ կրնան միօրինակ չ'ալ, քաջալերած պիտի ըլլանք . հետեւաբար Ազգը դառնաղէտ վիճակներէ անդերծ :

Քննեցէք մեր ազգային պատմութիւնը . շատ ցաւեր քաշած է մեր Ազգը այսպիսի ներող եւ անյիշաչար ընթացքով . Վասակ ալ այս ընթացքէն օգուտ քաղած է, ամեն շարութիւն կը գործէր Ազգին ու Եկեղեցւոյն դէմ . եւ ամեն անգամ որ ձերբակալ կ'ըլլար, Եպիսկոպոսաց ոտքը կ'իյնար կը պաղատէր, կ'երդուր . միւսանգամ չը մեղանչելու Ազգին ու Եկեղեցւոյ դէմ եւ կ'աղատէր . Եստ օրինակներ կրնայի բերել, ապացուցանելու համար թէ հանրական գործոց մէջ այսչափ ներող եւ անյիշաչար ըլլալը շատ սուղի նստած է մեր Ազգին : Միթէ միեւնոյն բանը չ'ենք ըներ հիմայ . միթէ ազգային Պատ-

րիարքարանի իշխանութիւնն ալ միեւնոյն ընթացքը բռնած չ'է՞ առաջնորդաց եւ ազգային աւէն կարդի պաշտօնէից համար . որոնց համար քննութեան տեսան մը կազմված է, եւ սրդարութիւնը երեւան ելած . ընդհակառակն ցաւելով տեսած ենք որ շատ անգամ ամբաստանեալք աւելի բարձր պաշտօնի կոչված են քան որ էին յառաջագոյն :

Ես ժողովոյս ուշադրութիւնը հրաւիրելով այս տեսակ ղեղձմանց դէմն առնելու, եւ ուրիշ այս տեսակ հարուածներու առջեւ զգոյշ կենալու համար կ'առաջարկեմ որ քննութիւն ըլլայ, արդարութիւնը յայտնվի եւ յանցաւորը դատապարտվի :

Ես այս առաջարկութիւնն ընելով իմ պարտքը կը կատարեմ . թող արձանագրվի :

Այլ սակայն կ'ըզգամ Եուսուֆեան էֆ. ի ակնարկութիւնը, թէ արդէն դատապարտված է այն եղելութիւնը . ես գիտեմ թէ ինչպէս դատապարտվեցաւ մարտ 20 ի պետական հարուածը . ժողովուրդն ինք այդ մեծ գործը կատարեց, դատապարտեց . բայց պէ՛տք է որ Երեսփոխանական ժողովէն ալ անցնի, եւ ի պաշտօնէ դատապարտվի . ինչպէս որ ժողովուրդը թէ եւ Խրիմեան Սրբազանին Պատրիարքութիւնը ինչդրեց, բայց Երեսփոխանական ժողովը իւր քրէտովը կատարեց : Եւ եթէ մինչեւ ցարդ եղածներն ու խօսվածները բաւական կը սեպվին դատապարտութիւնը հաստատած ըլլալու համար, ես կրնամ չափաւորել իմ առաջարկութիւնս, երբ ժողովը հաճի սապէս քրէտարկել . « Երեսփոխանական ժողովս կը դատապարտէ 1866 մարտ 20 ի պետական հարուածին հեղինակները » :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Փափաղեան էֆ. եւ իրեն համախոս մէկ քանի երեսփոխանք կ'առաջարկեն որ Սահմանադրութեան գաղարման պատճառներուն վրայ քննութիւն եւ դատաստան ըլլայ եւ Ընդհանուր ժողովը դատապարտութեան քրէտ տայ :

Այդ դատաստանը կը մերժեմ ես եւ կը յուսամ որ Փափաղեան էֆ. ու իր ընկերներն ալ պիտի մեղձեն ինծի հետ, եւ եթէ դժբախտաբար չը կրնամ համոզել զանոնք, այժմէն վըստան եմ որ ժողովը ինծի հետ պիտի մերձէ այդ դատաստանը եւ այդ քրէտն զոր կ'առաջարկեն : Երեւես ամենէն աւելի ես իրաւունք ունիմ այսպէս խօսելու զի եթէ այդ դադարման միջոցին ես ի Պօլիս ըլլայի, չը պիտի Լոսէի այն ատեն եւ պիտի բողոքէի եւ գուցէ

ինծի հետ բողոքող խումբ մըն ալ գտնէի : Պիտի բողոքէի, եւ չ'եմ ըներ թէ անմիջապէս պիտի յաղթող ըլլայի, զի այդ վստահութիւնը չ'ունիմ իմ կարողութեանս վրայ, այլ, այդ գաղարման պատճառ եղողները պիտի տեսնէին թէ օրինաւորութեան համար մարտնչելու մարդ կայ Ազգին մէջ : Ներեցէք ինծի ըսելու անոնց որ այն միջոցին հոս գտնուեցան ու կենդանութեան նշան չը տուին, հիմա դիւրին եւ անօգուտ բողոքներ ընելով թող ժողովին ժամերը չ'ըսպառեն :

Եւ այդ դատաստանը . եթէ ժողովը որոշելու ըլլայ, ինչպէս պիտի կատարէք զայն . այդ դատաստանը ընելու համար, պէտք է ձեր բեմին առջեւ բերէք զանոնք որ կ'ամբաստանէք, վիաներ մտիկ ընէք եւ նոյն իսկ Բ. Գուռը իւրեւ վկայ մտիկ ընէք : Ենթադրենք թէ յաջողեցաք, թէ մանրակրկիտ քննութիւն կրցիք ընել, եւ ահա՛ պիտի տաք ձեր դատապարտութեան քրէտն, ինչպէս ըսաւ Փափաղեան էֆ. Այդ դատապարտութեան քրէտն զո՞վ պիտի երթայ զարնէ, ո՞վ արդեօք . — ա՛հ, մարդս միշտ սխալման ենթակայ է, է՛ն ընտիր մարդիկը կը սխալին . թերեւս ձեր այդ քրէտն երթայ ընդհարկանիլ այնպիսի յիշատակի մը զոր միայն օրհնած ենք մինչեւ այսօր եւ որ ամենուն ալ սիրելի մնացած է . . . եւ դեռ եւս ո՞վ . — հրապարակաւ տամ այդ անունը . Սերվիչէն էֆ. :

Պիտէ՞ք, էֆէնտիներ, որ եթէ Սերվիչէն էֆ. չ'ըլլար, մենք հիմա իրեւ երեսփոխան չ'էինք կրնար բազմիլ հոս եւ Սահմանադրութեան վըրայ վիճաբանիլ : Եթէ գործված սխալները չ'էք ուղեր մոռնալ, գոնէ մի՛ մոռնաք նաեւ մատուցված ծառայութիւնները : Սերվիչէն էֆ. ին ազդեցութեամբը, տաղանդովը ու բնաւորութեամբը մէկը պէտք էր մաքառելու համար հին բունապետութեան հետ, որ սակաւին այնքան զօրաւոր էր այն ատեն : Եւ ներեցէք իմ համոզումս ըսելու, սակաւին մեծ օգուտ կըրնայ ընել մեր ժողովոց մէջ այդ անձը իր տաղանդովը ու հաստատամիտ բնաւորութեամբը :

Բայց ինչպէս է եղեր որ ետքէն այդպիսի անձիք Սահմանադրութեան գաղարման պատճառ եղած են, եթէ իրաւ է որ իրենք պատճառ եղած են : Ո՞վ կը համարձակի ըսել թէ շարամտութեամբ պատճառ եղան :

Սահմանադրութեան գաղարմանէն առաջ, Սահմանադրութեան օրով, Ազգային Վարչութեան մեքենայն դադրեր էր . այս վիճակը ս-

մենուէն հոգ ու մամուռը կը պատճառէր . ես իսկ որ ի Պօլլա չ'էի գտնուիր այն միջոցին , իմ պանդխտութեան երկրէս Սահմանադրութեան ինչ ինչ արամադրութեանցը մէջ անգործադրելիութեան տարերքը գտնելով անոնց փոփոխութեանը վերաբերեալ նամակ մը գրեցի , որ Մասիսին մէջ հրատարակվեցաւ . այս նամակը ետքէն իմացայ որ շատ ազգեցութիւն ըրեր է իմ բարեկամաց մէկուն զրայ : Բայց ես փոփոխութիւնը Սահմանադրութեան վերաբնունութեան ժամանակին համար առաջարկած էի , անոնք ժամանակը կանխելու ժպրհեր են : Ան' իրենց յանցանքը :

Ասոնք ըսել պէտք էր , վասն զի յուզմամբ եւ ապշութեամբ կ'ըսեմ , Վասակի ու մատնիչի անուններ արտասանող եղաւ այս առթիւ :

Եւ արդ կը դառնամ ընդհանուր ժողովին ու կ'ըսեմ . ի բաց թողո՛ւնք այդ դատաստանը որ օգուտ մը չ'ունի երբ արդէն Սահմանադրութիւնը վերստին գործադրութեան մէջ մտած է , ու վիճարանութիւնը ամփոփենք . սա՛ կէտին զրայ թէ՛ վերաքննութիւնը Յանձնախումբին ծրագրին զրայ ըլլայ , թէ՛ արդի Սահմանադրութեան օրինակին զրայ :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՅ. — Օտեան էֆ. ըսաւ թէ Փափազեան էֆ. եւ ուրիշներ դատաստան ուղեցին . իմ ուղածս դատաստան չ'էր , այլ Սահմանադրութեան վերաքննութիւնն օրինաւորութեան մէջ ընել :

Դատաստանը միայն Փափազեան էֆ. կը պահանջէ քանի մ'անձանց հետ . բայց իմ պահանջածս ծրագրին մերժումն է , որ օրինաւոր կերպով եկած չ'է մեզի :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Օտեան էֆ. ըսաւ թէ մարդը կը սխալի : մենք չ'ենք ըսեր որ չը սխալիր . բայց մարդն այն է որ իր սխալը կը ճանչէ :

Մենք չը տեսինք տակաւին թէ որն է այդ մարդը որ իր սխալը ճանչեց , ու գրաւոր կերպով այդ գրասեղանին զրայ բերաւ :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Քանիցս աղաչեցի ընդհանուր ժողովը որ անցեալը մոռնալով դէպ առաջ նկրտի . շիտակ է որ ժամանակով շատ բաներ պատահեր է , բայց ժողովը ժամանակ չ'ունի այդ բաները քննելու , վասն զի դատաւոր չ'է այս ժողովը . Օրէնսդիր ժողովին գործելու սահմանը մինչեւ ո՛ւր որ է , այնքան պէտք է խօսի :

Իե՛ղճ Աղզ , ես գիտէի թէ Եւրոպայէն է առեր օրէնքը , բայց գործադրելու համար աւե-

տարան միայն ունի . սխալ է եթէ դու կարծես որ սուր ալ ունի դայդ օրէնքը գործադրելու համար :

Օրինական ընթացք մ'ուզած է ունենալ Աղզը յառաջադիմութեան ճամբուն մէջ մտնելու համար , ուստի ուղիղ ճամբայ մը բռնենք ընթանանք Սահմանադրութեան վերաքննութեամբն զբաղելով :

Դուք եթէ դատաստան կ'ուզէք ընել , եւ եթէ ոյժ ունիք , Մշայ գաչախն մէջ Մամիկոնեան Վարդան մը կայ հիմա , բերէք հոս քանի ի դատաստան եթէ կրնաք , եւ Սերաստիոյ խնդրոյն համար (Փ-գ-դ-ա-ն էֆ-է Գ-ա-ն-ը-լ) եկիր քեզի այնպիսի բաներ խօսիմ , որ տեսնես թէ ի՛նչեր կան : Ա՛հ , ա՛հ , (կէ հո-ու-լէ՛ է Խ-ր-ոյ է- Բ-ա-ճ-է-լ Գ-է-ո-ւ-լ Գ-ն յը Լ-Յ-է-լ Ե-ր-ո-ւ-լ) ես որ այժմ ձեզի հետ կը խօսիմ , բայց զիտէ՛ք երեւակայութիւնս ո՛ւր է տարած զիմ հոգին . դուք հիմա բանաբարութեան զրայ կը խօսիք եւ կ'ուզէք արդէն ազգովին դատապարտեալ բռնաբարութիւն մը դատապարտել , բայց զիտէ՛ք արդեօք թէ դուրսերն ի՛նչ տեսակ հարստահարութիւններ եւ բռնաբարութիւններ կը գործվին . այս պահուստէրէ իջ Լ-Յ-է-լ Գ-ա-ն-ը-լ) դուք ըզրիմեան Նախագահ՝ աթոռին զրայ բազմեալ կը տեսնէք , բայց անոր հոգին ճնշեալ եւ տառապեալ հարստահարելոյ մօտն է :

Կ'աղաչեմ նորէն , անցինք շուտով վերաքննութեան խնդրոյն , այն կենսատու խնդրոյն որմէ բովանդակ Աղզն իր ցաւոց եւ յուսահատութեանց դարմանն անհամբեր կ'ըսպասէ :

Թէ որ ծրագրին լեզուն չ'էք հաւնիր կամ չ'էք հասկնար , զարմանալի չ'է . գաւառացին ալ քու լեզուդ , Պօլսեցւոյն հայերէնը չը հասկընար . ձեր լեզուն մինչեւ Տրապիզոնի սահմանները հասկանալի է , իսկ անկէ անդին՝ Հայուն հասկցած լեզուն ուրիշ է եւ պէտք է որ Խը-լու-թայ Յայամաւորքին պէս գրաբան գրվի :

Այդ ծրագրին Ռուսիսեան էֆ. գրեր է եւ դուք անոր ոճը կը դատապարտէք . դուք իմաստները որոշեցէք , լեզուն ու ոճը ինձի թողէք , ես գիտեմ ի՛նչ լեզուով պիտի գրեմ :

Ես ժողովրդոց եմ Հայր , հոս դատապարտութեան աթոռ չ'ունիմ , ես ոչ զոք կը դատապարտեմ եւ հոս ո՛չ Վասակ կը ճանչեմ եւ ո՛չ իսկ Վարդան :

Կ'առաջարկեմ որ բուն խնդրոյն դառնաք անմիջապէս . վերաքննութեան խնդիրը ձեռք առնունք եւ ի՛նչ կէտերու զրայ որ պիտի խոր-

հինք , այն կէտերը ձեռք առնունք , եւ ինչպէս առաջ ըսվեցաւ , ընդհանուր արամադրութեանց կէտէն սկսելով :

Դարձեալ կ'աղաչեմ որ գործնական ճանապարհի մէջ մտնայ ժողովը , զի այսպէսով անարդարանալի է իր ընթացքը Աղզին առջեւ , որ չը կրնար համբերել որ Օրէնսդիր ժողովը բարեհաճի իր ուզած ատեն օրէնք մը դուրս հանել , երկան բարակ քաշքշելով այս խնդիրը . յետոյ ժողովուրդն ալ պիտի սկսի քաշքշել , եւ ես ալ պիտի պարտաւորիմ խեղճ ժողովրդեան ըսելու թէ՛ ընդհանուր ժողովոյ մէջ քու բռնաբարած Մովսէս չը կայ :

ԻՅԵՔՃԵԱՆ Հ. ԷՅ. — Օրէնսդրութեան մէջ դրականութեան լեզուն գործածել եւ ոչ մէկ ազգի մէջ սովորութիւն եղած է , օրինաց լեզուն այնպիսի պարզ ոճով պէտք է ըլլայ , որ ամեն տեղ եւ ամեն գաւառներու մէջ հասկըցվի , եւ ինչպէս ըսաւ Սրբազան Նախագահը , Պօլսեցւոց լեզուն ալ գաւառայնոց համար անհասկանալի է :

Օրէնսդրութեան լեզուն գործածականը պէտք է ըլլայ . գրականութեան լեզուն դէմ չ'եմ խօսիր եւ չ'եմ անարգեր , այլ կը յարգեմ նա եւ . բայց քանի որ օրէնք մը հասարակաց համար կը սահմանվի , այս ըսել կ'ուզեմ որ , անոր լեզուն ալ այնչափ դիւրիմաց պէտք է ըլլայ :

Իմ հակադրութիւնս սա ծրագրին պարունակութեան եւ լեզուն դէմ չ'է , այլ բուն իրողութեան , եւ ասոր համար կ'առաջարկեմ որ մեր ընելիք վերաքննութեան առարկան չ'ըլլայ այդ ծրագիրը . այս կ'առաջարկեմ , ո՛չ ուրիշ պատճառի , այլ անցեալ զնախ մը հետքն ի բաց մերժելու եւ զայն խսպառ մոռացութեան տալու համար . եւ այս մերժումը կ'ուզեն դատաստան սեպեն , կ'ուզեն դատապարտութիւն , եւ ի՛նչ որ կ'ուզեն , այն սեպեն :

Դատաստան բանալ եւ անցեալը դատապարտել եւ ամեն եղելութիւն մի առ մի հոս նըշանակել մեր գործը չ'է , պատմագրաց կը վերաբերի այդ պաշտօնը , եւ թող զրեն անոնք ուզածնուն չափ եւ դատապարտեն :

Նորէն կ'ըսեմ , ո՛չ լեզու դատենք եւ ոչ անցեալ . անցեալը մոռացութեան տանք եւ մենք Սահմանադրութեան վերաքննութեան գործը փութով կատարենք , եւ այդ մասին ալ կ'ըսեմ որ , գործադրութեան տակ եղած 1863ի Սահմանադրութիւնը վերաքննենք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Նախ իւթիւճեան էֆ.ին պիտի ըսէի թէ հոս լեզուի զրայ քննու-

թիւններ ընելու տեղ չ'է , վասն զի ատով ժամանակ կ'անցնի . երկրորդ՝ Սրբազան Պատրիարքին կ'ըսեմ որ անցեալ կամ ներկայ ազգաշնասանձանց աչք գոցել չ'ըլլար . ես Սերաստիայէն գրած եմ իւթիւճեան եւ Փափազեան էֆ.ներուն ժողովրդեան կրած չարեաց պատճառները , հոն տեղ ժողովրդեան կրած չարիքները միայն Քիւրտերու երեսէն չ'է , այլ անոնց մեծ մասը Հայ Քիւրտերու երեսէն . եւ երբոր անոնք իմանան թէ հոս պետական հարուածով Սահմանադրութիւնը դադրեր է , տաճկերէն բուն բառովն ըսեմ , չ'ըլլա՛նք ձեռվրնին կ'առնեն կը խաղան , եւ թերեւ չը հաւատացվիր որ այդ ազգաշնասանձանց երեսէն է ժողովրդեան կրած չարիքները . բայց ես անձամբ ականատես եղած եմ : Ուստի եւ կ'առաջարկեմ որ եթէ դատաստանն անհարկն է , գէթ ժողովը պետական հարուածի հեղինակաց համար դատապարտութեան եւ Սահմանադրութիւնն Աղզին վերադառնալու համար աշխատող աշխու անձին չընորհապարտութեան քրէէ տայ :

ԵՌՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅ. — Ես համառօտ ըսեմ . խնդիրն արդէն լուսաբանվեցաւ եւ ոչ ոք կրնայ ըսել թէ դեռ լուսաբանված չ'է . խընդիրը քրէէի դրվելու կէտին հասած է եւ Փափազեան էֆ. ալ իւր առաջարկութիւնը չափաւորեց . եթէ Սահմանադրութիւնը արդէն գործադրութեան մէջ մտած չ'ըլլար , առաջարկված դատապարտութիւնը պէտք մըն էր . բայց դադարեալ Սահմանադրութեան վերստին գործադրութեան մէջ մտնելն այդ դատապարտութիւնը կը նշանակէ :

Ինչպէս Պէկեան էֆ. եւ ուրիշներն ըսին , ձգենք այժմ դատապարտութեան խնդիրը եւ քրէէի դրվի թէ ո՛րը պիտի ըլլայ քննելիք ծրագրինիս . անա այս որոշումէն կախում ունի վերաքննութեան խնդիրը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Ես Սրբազանը մտիկ ըրի՛ ոչ իրը Նախագահ երեսփոխանական ժողովոյ , այլ իբրեւ պաշտօնեայ Աւետարանի Ատենապետ էֆ. խօսքս ձեզի է , ըսէ՛ք թէ այդ անձինքը ե՛րբ , ո՛ւր եւ ի՛նչպէս ճանչեցին իրենց սխալը եւ խոստովանեցան . եթէ խոստովանած են , ո՛ւր է իրենց զղջման գիրը , իսկ եթէ չեն զղջացած , ինչո՞ւ անոնց համար դո՛ւք դատապարտութեան քրէէ չը տայ ժողովը . . .

ԱՍԵՆԱՊԵՏ ԷՅ. — Զեր հարցման չ'եմ պատասխաներ , վասն զի կ'երեւայ թէ իմ ըրած խօսքերս ձեր զրայ ազգեցութիւն չ'են ըրեր . հերիք է որ ժողովը արդէն համոզեալ կը տեսնեմ :

ՍԵՂԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — Այս խնդիրն այնպիսի խնդիր մըն է որ որ մը անպատճառ պիտի պայթէր ժողովին մէջ. ես այժմ ոչ զանազան կը յիշեմ եւ ոչ դատել կ'ուզեմ. միայն սա կը հարցնեմ այսօր ժողովին որ միթէ համբերելով պիտի կրնանք դիմանալ այնպիսի հարուածներու. թիէն բեմին վրայէն կը գոչէ թէ՛ անցեալը չը տեսնենք, գալիքին վրայ խորհիւնք, դիմանանք եւ կրօնք. ուստի պէտք է՛ անցեալը եղածներուն վրայ խօսիւնք, առջեւնիս եւ դաժնեցուն վրայ աշուրնիս դարձնենք եւ հիմա ո՛ր խնդրոց կարգ որ ունինք, անով զբաղինք :

ՏՐԹ. ԻՌԹԻՒՆՃԵԱՆ ԷՖ. — Կ'աղաչեմ որ Ստեան էֆ. ի առաջարկութիւնը քրէէի գրվի. ես կը բողոքեմ որ այսպիսով ժամանակ կ'անցնի :

ԱՐԵՍԿ Յ. ԷՖ. — Ես արդէն բողոքեմ եմ որ Աստուածայեա էֆ. խնդրոց կարգէն դուրս խօսողներու խօսք կուտայ, որով վեց խնդիր կայ հիմայ, որոց ամենքն ալ օրուան խնդրէն դուրս են :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իմ առաջարկութիւնս է դատաստանի եւ դատապարտութեան խնդիրը մէկդի ձգել եւ միայն սա խնդրոջն զբաղիլ թէ՛ ո՞ր ծրագիրը քննութեան առնելու է. հիմա ասոր դէմ ըսելիք ունի՞ Արշակ էֆ. :

Ես առաջարկեցի եւ կը կրկնեմ հիմա իմ առաջարկութիւնս. ո՛վ որ կ'ուզէ թէ ի բաց թողվի դատաստանի խնդիրը, ձեռքը վեր առնէ :

(Մեծ-էջն Ժամ-ը Եր-գընէն վեր կ'առնան)

Ո՛վ որ դատաստան կ'ուզէ, ձեռքը վեր առնէ :

(Մեծ-էջն Եր-գընէն վեր կ'առնան)

Ըսել է ընդհանուր հաւանութեամբ դատաստանի խնդիրն ի բաց թողվեցաւ :

Սահմանադրութեան վերաքննութիւն չ'ընդունող չը կայ, բայց ոմանք կ'ըսեն թէ ըստ ներկայ Սահմանադրութեան տրամադրութեանցն ըլլայ վերաքննութիւնը. հիմա խնդիրն ասոր վրայ է. այս կէտին վրայ ասկաւին խօսք ուղղունք կա՞ն :

(Փափաղեան էֆ. թէ եւ խօսք ուղած էր, բայց այլ եւս չ'ուզէր խօսիլ) :

Ես կ'ուզեմ սա կէտն ալ քրէէի դնել թէ՛ այս մասին վիճարանութիւնը դեռ եւս շարունակի՞ թէ ոչ, եւ թէ ո՞ր ծրագրին վրայ ըլլայ վերաքննութիւնը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովն այսօր կը կամի որ մինչեւ հիմայ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութիւնն իր ազատ կամօքը

վերաքննութեան ենթարիէ, եւ այնպէս պէտք է ըլլայ :

ՊԵՆԵԱՆ Թ. ԷՖ. — Քրէէի զննիչքնիս երկու խնդրոյն մէկն է, աղէկ հասկնանք. ես ըսած էի որ Ազգին առջեւ անուղղակի եւ ասորինաւոր կերպով եկած է այս ծրագիրը, եւ ըսի, ըստ օրինի ձեռք դարնենք վերաքննութեան. ուստի պէտք է Վերաքննիչ Յանձնախումբին ծրագիրը չը կայի պէս բռնել ըստ իրաւանց. բայց ժողովը սխալ մ'ըրեր է արդէն իր տուած որոշմամբը, այս սխալը պէտք է ես առնու :

ԻՌԹԻՒՆՃԵԱՆ Կ. ԷՖ. — Ինչպէս ասկէ առաջ ալ ըսի, Ընդհանուր ժողովն արդէն ըրած մէկ որոշումը կ'աւրէ այս կերպով. Վերաքննութիւնն ըստ օրինի եւ ըստ Սահմանադրութեան տրամադրութեանցն ըլլալու համար, Յանձնախումբին անդամները ժողովոց եւ Տեսուչ Խորհրդոց ոմանց անդամներէն բաղկացեալ պիտի ըլլային. բայց այն ատեն ոչ օրինաւոր ժողով եւ ոչ խորհուրդներ կային. հիմայ հարկ կ'ըլլայ ուրեմն որ չորս տեսուչ խորհուրդներ կազմվին եւ անոնց մասնակցութեամբը վերաքննութիւնը կատարվի : Բայց գործը հոն գալու համար նախ պէտք է ժողովն որոշէ թէ իր ասկէ առաջ ըրած որոշումները ես կ'առնու. վասն զի մինչեւ որ այս չ'որոշվի, եղած առաջարկութիւնները քրէէի չ'են կրնար գրվիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նորէն խնդրոյն վրայ վիճարանութիւն կ'ըլլայ, խօսքը՝ քրէէի դնելու կամ չը դնելու վրայ է :

ԱՐԵՍԿ Յ. ԷՖ. — Չէք ըսեր թէ ի՞նչ ձեւով քրէէի պիտի դնէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Երբ քրէէի գրվին ընդունվի, այն ատեն նախ ձեւը կ'որոշեմ եւ այնպէս քրէէի կը դնեմ :

Ահա ձեւը.

Ընդհանուր ժողովն իր առջեւ երկու Սահմանադրութիւն ունի, մէկը՝ գործադրութեան մէջ եղածն է եւ միւսը քննութեան մէջ եղածը, ասոնցմէ՛ սրը կ'ուզէ վերաքննել ժողովը :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Ասկէ առաջ Ընդհանուր ժողովոյն որոշմամբը Յանձնախումբ մը կազմված է, որ վերաքննութեան ծրագիր մը չ'ինած ու բերած է. բայց հիմայ ոչ այդ Յանձնախումբը կրնայ ըսել թէ իր բերած ծրագիրն անպատճառ պիտի վերաքննվի, եւ ոչ Ընդհանուր ժողովը կրնայ ըսել թէ արդէն գործադրեալ Սահմանադրութիւնը պէտք է անպատճառ վերաքննվի. բայց դուք ո՛րն ալ վերաքննէք, երկուքն ալ վերաքննած պիտի ըլլաք, զի

բաղդատութեամբ կ'ըլլայ քննութիւնը. ուստի անհիմն եւ անտեղի են այս քաջբառաքը եւ բոս իս անմեկնելի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Չը հասկցանք թէ ինչ էր ձեր առաջարկութիւնը :


ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ — Հիմայ այդ գրասեղանին վրայ երկու Սահմանադրութիւն կը կենայ, մին գործադրեալ եւ միւսն գործադրելի. ես կ'առաջարկեմ որ այդ երկուքն մէջէն վերաքննելի կէտերուն նկատմամբ ցանկ մը չ'ինվի եւ ժողովոյն ներկայանայ, որպէս զի տարբեր կարծիքները հաշտվին. թէ ձեր Վերաքննիչ Յանձնախումբին այնքան երկասիրութիւնը ես չը թողվի եւ թէ Ընդհանուր ժողովն իր նպատակէն չը վրիպի, երկուքն իրարու հետ բաղդատելով քննած ըլլալով :

Տ. ԱՄԲՐՈՍԻՍՍ ՎՐԴ. — Սրբազանը սա դժուարութիւնը կը ցուցնէ որ եթէ քրէէի գրվի, Յանձնախումբին անդամոց եւ անոր տեղեկաբերին յարգանք մ'ըրած չ'ենք ըլլար. ես կ'ըսեմ որ՝ քրէէի դնելով անոնց յարգը չը կուտարի եւ աշխատութիւննին բռնաբարված չ'ըլլար. այլ ապօրինաւոր կերպով անոնց յանձնրված բան մը օրինաւորութեան մէջ կը դնենք. ըստ իս քրէէի դնելու ալ հարկ չը կայ :

ՄԱԶԻՆՄԵԱՆ Յ. ԷՖ. — Նախ եւ առաջ օրինաւորութիւնը պէտք է յարգվի թէ Դիւանէն եւ թէ երեսփոխաններէն. երբէք չը լաված բան է մինչեւ հիմայ թէ Սահմանադրութեան վերաքննութեան վրայ վիճարանելու համար քրէէարկութիւն ըլլայ. ոչ խնդրոց կարգին մէջ կայ եւ ոչ ատանկ խնդիր մը յուզվեցաւ Դիւանին կողմէն. ըսել է որ այս խնդիրը նոր երեւան ելած է, ուստի պէտք է որ այսօր իսկոյն այսինքն բացված օրը քրէէի չը գրվի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մաղլըմեան էֆ. կ'ըսէ թէ վերաքննութեան վրայ վիճարանելու խնդիրը նոր է եւ կը պահանջէ որ այսօր քրէէի չը գրվի. այլ խնդիրն այս կերպով խնդրոց կարգըն անցնի. Մաղլըմեան էֆ. իրաւունք ունի, վասն զի եթէ այս խնդիրն այսօր քրէէով լուծվի, բացակայք իրաւունք կ'ունենան բողոքելու. ուրեմն կը պարտաւորինք այս կէտը խնդրոց կարգն անցընելով հետեւեալ նիստին թողուլ :


Ատեանը վերջացաւ ժամը 10 1/2 ին :



ԱՏԵՆԱՊԵՏ
Գ. ՕՏԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՐ
ՌՈՒՍԻՆԵԱՆ

Faint, illegible text on the left page, possibly bleed-through from the reverse side.



1848

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
54 EAST LAUREL STREET, CHICAGO, ILL. 60607
U.S.A. AND CANADA
OTHER COUNTRIES: SEE LIST OF DISTRIBUTORS

ԳԻՆ 2 ՂՏՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախվի ի Գիւանատան Պատրիարքարանի ի Ղալաթիա ,
և Կը գտվի ամեն գրավաճառաց քով և Յկեղեցեաց բանկայնեքը :